

Արև

ԱՄԱՍԱԳԻՐ
ԿՐՈՆԱԿԱՆ - ԳՐԱ ԱՐ - ԲԱԼԱԽԻՒԴ

ԳՐԱԶՈՒՄԱԳԻՐ ՀԵՇՎԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՎՐԱՅԻՐ ՀԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ



451 - ԾՈՐԵԼՐԵԱԿԱՆ ՏՐՈՒ - 1951
Ճ. ԳՐԵՎԱՐԱՐ ԱՐԲԱ ԳՐԵՎԱՐԱՅԻՐ ՀՈՐԵԼՐԵԱԿԱՆ ԱՐԲԱ
ՀԱՅԱՐ ԵՐԵՍՈՒՆԵ Ե Ե 4403486

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԼԳՐԱԿԱՆ	Երես
— Նամանջի ոգին սփյուռքն ներ (թ) .	353
ԿՐՈՆԱԿԱՆ	
— Անմահութեան ապահովութիւնը .	X
ԲԱՆԱԼՍԵՂՃԱԿԱՆ	
— Ինչո՞ւ .	Գ. ՄՈՒՇԵՆՑ
— Կրամ .	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
— Գարուն .	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԲԱՆԱԼՄԻՐԱԿԱՆ	
— Խաշառուր Դուքս Անժիոնի .	ՀԱՅԿ ՊԵՐՊէՐԵԱՆ
ԿՐՈՆԱ-ԲԱՆԱԼՄԻՐԱԿԱՆ	
— Աւազմախութիւն մը Մաղաքիայի Դրբին ուրց .	ԱՆՈՒՇԱԿԱՆ ԱԲԳ. ԶՊՀԱՆԵԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ	
— Եղիչ պատմայիր եւ Վարդանանց պատե- րազմը (10) .	ՊԱՐԳԵՒԻ Վ.ՐԴ. ՎՐԹԱՆԵՍԵԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ	
— Հաղբատ .	Ն. ԵՊՈ. ՄՈՒԱԿԱՆ
ՀԻՆ ԵԶԵՐ	
— Դովես հօմարիս սաղմոսին .	Հրամ. Ն. ԵՊՈ. ՄՈՒԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ	
— Դիրք եւ յարաբերութիւնք Հայ Եկեղեցւոյ .	ԾԱԽԱՐԾ Վ.ՐԴ. ՍԱՀԱԿԵԱՆ
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՄԵՆ	
— Եկեղեցականք - Բեմականք .	382
— Պատօնականք .	383
Յանի նիւրոց 1951 տարւոյ .	385

ԱԽՈՆԻ Տարեկան բաժնեգինն է՝ բոլոր Երկիրներու համար՝ Ա.նզլ. Շիլին 15

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in

JERUSALEM

Ահու

ԱՄԱՍԳԻՐ

ԿՐՈՒՏԿՄ-ԳՐԱԿՄ-ԲԱԼԱՀԻՐԱԿՄ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐքՈՒԹՅԱՆ



ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ
ԵՐՈՒՍԱԼԵՄ

1951

ՆՈՐ ԾՐՁԱԿ

ԻԵ. ՏԱՐԻ 1954



ՍԻՌՆ

ՅԱՆԿԱ ՆԵՐԵՑՈՅ 1951 ՏԱՐԻԱՅՑ

Բ. Ա. Ն. Ա. Ս Ի Ր Ա. Կ Ո. Ն . —

ՆԻՐԱՅՐ ՎՐԴ. ՆՈՎ. ԱԿԱՆ. — Սուրբ
Գրիգոր Լուսաւորիչ 21

ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԷՆ. — Խորենացի,
Եղիշե և Հ. Ներսոս Ակինեան 24, 88,
114, 147, 171, 208, 239, 304

ՄԻՐԱՐՓԻ Տ. ՆԵՐՍԻԾԱՆ. — Մինաս
Ակարազ և իր ծաղկած նկարները 142

ՀՈՅԿ ՊԵՐՊԻՔԵԱՆ. — Գր. Գարանաղ-
ցիի դժուարիմաց մեկ հատուածին
մասին 273

Ալիք դաշնագիրը Գր. Գարանաղցիի
«Ժամանակագրութեան» մեջ 302, 330
հաշատուր դուժա Անտիոքի (քրգմ.) 360

Բ. Ա. Ն. Ա. Ս Տ Ե Պ Ծ Ա. Կ Ո. Ն . —

ԵՊԻՋԱՐԴ. — Ասդերեն պայծառ
Վարդանի սիրը 17
Երազներէս վերջ 66
Թէ մոռացայց զեզ... 269
Օգնաւի պատուհաննեն 298

Ն. Ծ. — Հճշեակ Վիոլանի համար
(քրգմ.) 328

ՎԱՀԱՆ ԹԼՔԻՆԱՆ. — Աղբաներուն
մահը (քրգմ.) 19
Ճարած զանգակը (քրգմ.) 20
Հանոյքը 207
Պատրանք 238

Գ. ՄՈՒՆԵՆՅ. — Խօսք ընդ Վարդանայ 69
Տրունիք 112
Ապրիլ 24 140
Փունչն այս սրդոց... 329
ԽԵՂՈՒ 358

ԱՐՄԵՆ ԵՐԿԱՓ. — Յարուրիւն
Խրիկուն 111

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ. — Հրաւապատում
... Հոգիս սեղան մըն է բաց
Սուեակներ 170
Վեցեակներ 301
Խրաս 359
Գարուն 359

ԱԽԵՏՈՒՄ. — Երազանք 206

ԱԶԱՏ ՎԵՏՈՒՆԻ. — Զգիտեմ 237

Գ. Ր Ա. Կ Ո. Ն . — 71

Յ. ՕՇԱԿԱՆ. — Վարդանի նառը

Լ. Ե Զ Ա Ի Ա. Գ Ի Տ Ա. Կ Ո. Ն . —

ՊՐՈՅ. Հ. Ա ՃԱՄՈՒՅԱՆ. — Հնդեւրոպական
նախաւշան 37, 123, 184

Հնդեւրոպական բարբառներ և
Հայերենի դիրք Երանց միջն 185, 345

Խ Մ Բ Ա. Գ Ի Ա. Կ Ո. Ն . —

Ամանոր 1

Բ. Ե. Գ. — Յանոսի մեհեանը 5

Վարդանանց ներուամարտի 1500ամ-
եակը 58

Ամեն. Տ. Գարեգին Ա. Արք. Խաչո-
սուրեան, նորների պատրիարք Կ.
Պոլսոյ 130

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — Պարտի զի-
սակցուրիւնը և նորա կատարումը 193

Կ. Ա. Գ. — Ազգային-եկեղեցական սո-
ներու առիրով 227

Նոր ձեռնադրուած եպիսկոպոսները
Ս. Արոռոյ 257

Վերապարձ Ս. Արոռոյ Նուիրակ
Գեր. Տ. Խերովիք Վ. Րդ. Մանուկեանի 289

Նահանջի ոգին սփիւրէն ներս 321, 353

Կ Ր Ո Ն Ա. Կ Ո. Ն . —

ԳՐԻԳՈՐ ՄԻԿ. Հ. ԳԱԼՈՒՍԵԱՆ. — Տէ-
րունական Ազօրքը 7, 100, 134, 164,
197, 230, 266

ՊԱՐԹԵԻ Վ. Րդ. ՎՐԹԱՆԿՈՒԱՆ. — Ա.
Սեֆիանոս 11

Խ. — Անմանուրեան կարեւորուրիւնը 13,
104, 137, 167, 201, 234, 295, 324, 356

Ե. Վ. Տ. — Կարմիր շարանը 63

Բ. Ե. Գ. — Երկու տարրերը 108

ԿՐՈՆԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ . -

ԱՆՈՒՇԱՏԱՆ ԱԲԳ. ԶԴՅԱՆԵԱՆ . -
Ուսումնասիրուրիւն մը Մաղաքայի
գրեթե տուրջ 308, 332, 365

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ . -

Ն. ԵՊՈ. ԾՈՎԱԿԱՆ . - Հաղբատ 375

ՀԻՆ ԷՋԵՐ . -

ՀՅԱ. Ն. Վ. ԾՈՎԱԿԱՆ . - Քարոզ Ս.
Վարդանանց Հայոց 75

ՀՅԱ. Ն. ԵՊՈ. ԾՈՎԱԿԱՆ . - Գովիս
հմարիս սաղմոսին 377

ՊԱՏՄՈՒԿԱՆ . -

ԱՐՏԱԽԱՉԴԱՐՔ . - Կիլիկեան ամրոցներ
— Հռոմկայի դղեակ — 29, 173, 275

ԱՍՈՂԻԿ ՎՐԴԻ . - Հայերը Մայրագոյն
Արեւելիքի մէջ 33

ՊԱՐԴԵՒԻ ՎՐԴԻ. ՎՐԹԱՆԻՍԵԱՆ . - Եղիշէ
Պատմագիր եւ Վարդանանց Պատե-
րազմը 76, 117, 150, 178, 212, 242,
279, 311, 335, 369

ԵՎԻՇԵ ՊԱՏՄՈՒԴԻՐ . - Տիկնայի փափ-
կասունք 73
Հայոց ընդդիմուրիւնը պարսից քա-
գաւորին դէմ

ԳԵՂԱՄ ՄՐԿ. ԳԱԲԻԿԵԱՆ . - Դեւոնդ-
եան խանաներ 83

ՇԱԽԱԲԾ ՎՐԴԻ. ՍՈՀԱԿԵԱՆ . - Դիրք եւ
յարաբերուրիւնք Հայ Եկեղեցւոյ 120,
348, 379

ՊԱՏՄՈ. - ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ . -

ԶԱՒԵՆ ԱԲԳ. ԶԻՆՉԻՆԵԱՆ (քրզմ.) . -
Պատմուրեան եւ աւանդուրեան
նշանակուրիւնը 181, 246
Պատմուրեան բնոյրը, բնազանցա-
կանը եւ պատմականը 248, 315
Հելլեն եւ եբրայական հասկացողու-
րիւններ 339

ՔՆՆ Ա. ՊԱՏՄՈՒԿԱՆ . -

Ամփոփեց՝ ՊԱՐԴԵՒԻ Տէր ՑՈՎԱԿԱՆՆԵԱ-

ԻԱՆ . - Թրանսական բննադատու-
թեան երեք սիւները 217, 341

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ . -

Յուն. - Փետր.	Ամսութեայ լուրեր	43
Մարտ	» »	95
Ապրիլ	» »	126
Մայիս	» »	155
Յունիս	» »	187
Յուլիս	» »	223
Օգոստոս	» »	249
Սեպտեմբեր	» »	284
Հոկտեմբեր	» »	317
Նոյեմբեր	» »	350
Դեկտեմբեր	» »	382

ՏԵՐՈՒԻՆԻ . -

Տիգրոս Խան Քէլէկեան	48
Տօֆր. Ղազարոս Տէմիրեան	96
Տիար Յակոբնան Եազուպեան	128
Գեր. Տ. Կարապէս Ս. Արք. Մազլրմեան	153
Տ. Ներսէ Վ. Վրդ. Թորոսեան	154
Գեր. Տ. Գևորգ Ս. Արք. Արալանեան	224
Միաբան Կարապէս Սարգիսեան	288
Գեր. Տ. Արտաւազդ Ս. Արք. Սիւրճեան	318
Տիկին Վերգին Քէօլէեան	320

Ո.ՅԼԵՒԱՅԼՔ . -

Ո. Տեղեաց բարձր վերահսկողի արքա- յական նշանակում	39
Կոնդակ Հայրապետական Վարդան 1500ամեակի առքիւ	49
Ո. Վարդանանց 1500ամեակի տօնակա- տառուրիւններ	93
Գ. Ա. - Յարուրեան աւեսիքը	97
ԳԱՐԵԳԻՆ ԱԲՔ. ՏՐՈԳԻՉՈՆԻ. - Երբ ներեն է անհնար, կարելի չէ հայ- նոյել «Սուրբ Հոգին»	161
Պարսկասանի նուիրակ Գեր. Տ. Հայրիկ Վ. Վրդ. Ասլանեանի վերահարձը	221
Վեհ. Ապտալան Ա. Խան էլ Հիւսէյն, Ճանգուցեալ քազաւոր Յորդանանի	225
Եպիսկոպոսական ձեռնադրուրիւն եւ օծում	261, 293
Բարեպատական նուերեներ Ս. Էջմիածնի	350

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

—= Ս Ի Ռ Ա =

ԻԵ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1951

«ԴԵԿԱՏԵՄԲԵՐ»

ԹԻՒ 12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆԱՀԱՆՁԻ ՈԳԻՆ ՍՓԻՒՌՔԵՆ ՆԵՐՄ

Բ.

Այս մեծ բեմերէն երբ կը փոխադրենք հարցը մեր սփիւռքի ճակատին վրայ, պարտուղական այդ հոգերանութիւնը աւելի քան ցայտուն և բազմերես կը դառնայ, որոնց պատճառներուն շարքը արդարացումներ ըլլալէ աւելի, տիրող կացութեան և վիճակներուն բնոյթը բացայայտելու կը ծառայեն:

Անշուշտ ակնարկուած պատճառներուն մէջ մեծ է տեղը այն արհաւիրքին, զոր ապրելու հարկադրեցին մեր ժողովուրդը: Մեր հոգին չէ պաղած դեռ այն ահաւոր կրակէն ու արիւններէն՝ որոնք մեր բաժինը եղան և տակաւին կը շարունակէն մնալ իրենց շրջուած ժողովուրդիւններով: Մեծ ժողովուրդները, իրենց սեփական հողին վրայ, պարտութիւն մը քառորդ դարէն հազիւ կրնան մարսել, դարմանել: Իսկ երբ մերինին նման փոքր հասարակութիւն մը ջարդակոտոր ու արմատախիլ դուրս կը նետուի իր բնավայրէն, և թշուառութեան բոլոր ձեւերէն անցնելէն յետոյ, կտոր կտոր կը բաշխուի օտար մշուշներուն ծոցը, շատ բնական էր թէ քանի մը քառորդ դարեր պէտք էին որպէսզի աղէտը չափով մը կարենար ամոքուիլ:

Դժբախտութիւնները իրարու կը յաջորդեն, կ'ըսէ մեր քիչ մը ճակատազրապաշտ բայց իմաստուն ժողովուրդը: Օտար երկիրներու մէջ ցըցքնուած հայութեան տարանջատ մասերը քիչ առ քիչ պիտի կորսնցնէին իրենց հայեցի աւանդութիւնները և յատկանիշները, օտար միջավայրերու և չափով մըն ալ մշակոյթներու մաշումին տակ, ինքոլինքնին զտնելով տակաւ ճշմարիտ տապնակներու առջև, լինել թէ չինելու չափ զօրաւոր: Կարդ մը երկիրներու մէջ մեր ժողովուրդի ինքնապահպանման ամուր բնազդը պիտի շարունակէր իր գերը, սակայն Ամերիկայի և Եւրոպական ցամաքամասերու վրայ ձուլումի վտանզը օր աւուր աւելի ակնրախ և զգալի պիտի դառնար: Ճերմակ այդ ջարդը, ինչպէս սովոր ենք ըսել, ահարկու և մտահոգիչ է մանաւանդ երբ վերոյիշեալ երկիրներուն մէջ զտնուող մեր արենակիցները դառնան իրենց պատկանած երկիրն քաղաքացի, և իրենց զաւակներուն տան միայն այդ երկրի կրթութիւնը, ապ-

րին նոյն աշխարհամասի քաղաքական կեանքով և մշակոյթով։ Այս հանգամանքը իր սկզբնական շրջանին անհատական նկարագիր մը կընայ ունենալ անշուշտ, սակայն որքան ազգային զիտակցութիւնը տկարանայ, նոյն համեմատութեամբ կը շատնայ այսկերպ մտածող անհատներու թիւը։

Գաղութիւներու մէջ Հայեցի կատարեալ կրթութիւն մը չկարենալ ապահովելուն զիմանարար պատճառներէն մին ալ անտարակոյս, մեր երկրորդական վարժարաններու պակասն է։ Տնտեսական դժուարութիւններէն աւելի՝ զայն ունենալու բուռն փափաքը և պահելու ճիզզ միշտ պակսեցաւ Սփիւռքի Հայութեան։ Յարդ գոյութեան եկող և շարունակութիւններն ալ բաւարար կը թութիւն մը չտալէ զատ, չկրցին ստանձնել միջավայրին պահանջները, և դիմակալել դժուարութիւնները։ Իսկ օտար երկրորդական վարժարաններու մէջ իրենց ուսումը լրացուցած սփիւռքի մեր երիտասարդութիւնը մնաց առնասարականներագ և անիտէալ, մեր ազգային մեծ մտահոգութիւններէն խուսափելու չափ անտարբեր։ Այս հոգեխառնուածքը օտար միջավայրի և արտաքին ազդեցութիւններու արդիւնք չէր միայն, այլ հոգեկան քայլքայման տեսակ մը ախտանիշ, աւելի ճիշտ պարտուողական ներքին վիճակի մը նորերևոյթ հոգեխառնութիւնը։

Մեր զարթօնքի և յաջորդ սերունդները, ոչ միայն զրական գետնի վրայ, այլ նաև ընկերային և մշակութային մարզերու մէջ, կատարեցին նախախնամական գերեր, անոնց մեծ մասը սակայն օտար միջավայրերէն կը բերէր իր մտքի պաշարը։ Տարբերութիւնը մեծ է անոնց և մեր ներկայ սերունդին միջև։ Եթէ մեզ կանխող սերունդները կրցին ինքինքնին ազատազրել ժամանակէն, որ նուազ ճնշող և մաշող չէր քան մեր օրերուն, որովհետեւ անոնք զիտցան անհուն խանգով մը իջնել պայքարի կրկէսը իրենց ժողովուրդին, և անոր «բարեօք պատերազմը պատերազմելու» մէջ եղան սրտայոյզ զինուորներ։ Աւելին՝ անոնք իրենց մէջ կրցած էին պահել ցեղային այն մեծ առաքինութիւնները, որոնք մեր տմոյն դարերը այնքան տրտում բայց գեղեցիկ փայլով միշտ զիտցան քաղցրացնել։ Անոնք բոլորը մտքի և զոհողութեան հերոսներ եղան, զիտցան հաւատարիմ մնալ իրենց պատմութեան, մտածել և զգալ իրենց ներկան և զալարուիլ չբացուած ապազայի լաւազոյն երազներովը։ Գեղեցկութիւն, խրութք և անդիմադրելի հրապոյր էր անոնց աչքերուն առջև մեր ժողովուրդին դարաւոր իրազործումներուն երազը, պատկերին մէջ հայրենիքին, զոր կը եին դարերով նախորդ սերունդները իրենց արեանը մէջ, և զոր ունէին իրենք նոյնքան ապահով։

Այսօրուան երիտասարդը իր առօրեայ զրուանքներէն անդին հազիւ թէ կը մտածէ մեր ներկայի և ապազայի մեծ հարցերուն։ Ասիկա տարիքի բերումներէն շինուած անհետաքըքրութիւնը մը չէ, այլ հաւատքի պակաս, աւելի ճիշդ բայց անզութ բացատրութեամբ մը, պարտուողական ողիին աւերը սփիւռքէն ներս։

Հոգերանական այս ողբերգութենէն կը ծնի յարանուանական ողին։ Յարանուանական, բաժանեալ և նոյնիսկ իրարու հակառակ են նոյն ժողովուրդին մասերը, երբ նման ողիով լեցուած ու միացած չեն, երբ արեան և ճակա-

տագրի նոյնութիւնը չեն զգար։ Մեր խօսքը կը վերաբերի անոնց՝ որոնք առանց յայտարարելու, յուսահատ են հայ ժողովուրդէն, անոնց՝ որոնք չեն յաջողիր այժմէականութեան վերածել մեր յոյսը, մեր իրաւունքները և մեր հաւատքը, շարունակելու համար մեր պատմութիւնը իր ստեղծագործ և ապրող էլերուն վրայ։

Այդ ողիին արդիւնքն է պատճառը մեր ընտանեկան քայքայումին։ Մեր երիտասարդութիւնը կը վախնայ ընտանիք կազմելէ, և ասիկա տնտեսական պատճառներու արդիւնք չէ միայն։ Այսօրուան մեր տունը, սփիւռքի շատ մը կեղրոններուն մէջ, չունի իր հին օրերու նուիրական և անխորտակելի միութիւնը, գարչ կենցաղի և սրբապիղծ դրժումներու բազմակերպ տեսարանները որոնք կը պարզուին շարունակ ամենուրեք, շատ բան կը պատմեն այս քանդումէն։ Ընտանիքը կազմալուծող խոշոր ազգակներ են նաև օտար կրթութիւնը, օտար ամուսնութիւնները, օտար բարքերը, որոնց հետ այնքան դիւրին հաշտուելու զգայարանքները տակաւ կը զօրանան մեր մէջ։ Այսօրուան երիտասարդը եթէ չաճապարեր օր առաջ կազմելու իր տունը, ատիկա չածանցիր միայն բարքերու ապականութենէն և տնտեսական պատճառներէն, այլ տուելաբար իր ժողովուրդի մասին ունեցած իր հաւատքի պակասէն։ Վասնզի ո՛վ որ չի հաւատար Հայ օճախին, չի կրնար հաւատքը ունենալ իր ցեղի ապազայն, իր հայրենիքին։ Սփիւռքի երիտասարդը, հետեւբար, պիտի չդանդաղէր օր առաջ նուիրագործելու և կազմելու Հայ տունը, եթէ իր հոգիին մէջ կուրած չըլլար այդ տունին սիւնը։ Թող թէ առաւել կամ նոււազ չափով ընտանեկան յարկեր կազմել ուղղողները կը պատկանին մեր այն դասակարգին, որոնք առհասարակ գերծ են վերոյիշեալ նպաստաւոր ու չափով մը աննպաստ բերումներէն։

Նահանջի նոյն ողին մեր կրթարաններէն և մեր եկեղեցիներէն ներս։ Տակաւին երէկ, համաշխարհային երկու կործանարար պատերազմներէն առաջ, մեր եկեղեցին և մեր գպրոցը առաւել կամ նոււազ չափով նուիրական ասպարէզներ էին, և անոնց խորհուրդին և սպասարկութեան կը կանչուեին մարդեր՝ որոնք կ'արժեկորէին ու կ'ապրեցնէին իրենց դերը։ Տակաւին երէկ Հայ ուսուցիչը և Հայ կղերը իրաւամբ մտքի և հոգիի մշակներ և առաջնորդներ էին մեր ժողովուրդին, այսօր այդ զոյզ և նուիրական ասպարէզները մնացած են շատ երկրորդական մարդերու։

Տնտեսական պատճառներու արդիւնքը չէ այս լքուածութիւնը, այլ ազգային յղացքի և հոգեկան և իմացական արժէքներու գուրզուրանքին պակասը։ Թէկ տպեղ, սակայն որքան տեղին է ըսել թէ մարդիկ իրենց խորհրդն ու ձիագարմանը վարձելու համար յաճախ փորձուած զործազէտներու մէջէն կ'ընտրեն զանոնք, մենք մեր ապազայ սերունդներու դաստիարակութեան զործը սկսած ենք վստահիլ ասպարէզէն չեղող մտքի անդամալոյներու։ Ահա հակադրեալ մտածողութիւնը որ մեզ կը բաժնէ մեր նախորդ սերունդներէն ստեղծելով մեր օրերու ողբերգութիւնը։

Տակաւին, ամբողջացնելու համար պատկերը, այսօրուան սփիւռքի զըրագէտին չի պակսիր որոշ պատրաստութիւն և տաղանդ, սակայն ազգային

խորքի և յղացքի պակասը սփիւռքի մեր զրականութեան ճիզը վերածած է ճիղի միայն, առանց ամրողացնելու սերունդի մը կերպարանքը եղող նկարագրին բոլոր զիծերը: Քառորդ դար է որ հայ սփիւռքը, հակառակ իր փափաքներուն և ճիգերուն, ի վիճակի չեղաւ ստեղծելու միակուր և պայծառ աղային զիտակցութիւն, իր մշակութային և ընկերային կրկնակ մարզերուն վրայ: Ի վերջոյ պէտք է խոստովանիլ թէ զրականութիւնը ընկերութեան հաւատքի, հաստատ կենցաղի վիճակներէն առաւելաբար կ'առնէ իր թափը, սնանելով ժողովուրդի մը կենսունակութեան աղբերակներէն:

ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ

Զ. — Գալ կեանքին բոլոր փաստերուն անբաւական թուելուն հիմնական պատճառը սա է որ անոնց ստուգումը բացարձակապէս անկարելի է: Երկրաբանութեան մէջ ենթադրութիւնները անկասկած կրնան ստուգուիլ զանոնք ենթարկելով տեսանելի և չօշագիելի իրողութիւններու փորձին: Բայց ապագայ կեանքի մասին ենթադրութիւնները, խնդրին բնոյթով, չեն կրնար հաստատուիլ անդրգերեղմանական փորձերու դիմելով: Երբ, այս առարկութեան իրը պատասխան կ'ըստուի թէ պահանջել փաստի տեսակ մը որ անհրաժեշտօրէն հարցէ գուրսէ, անբանաւոր խնդրանք մըն է, ակներև է որ այս պատասխանը հարցը աւելի չի լուսաբաներ: Այս մասին իսկապէս արդիւնաւոր նկատողութիւնը սա է որ յաւիտենական կեանքի ենթադրութեան ստուգումը բոլորովին անկարելի չէ: Անմահութիւնը միայն ապագայ աշխարհին չվերաբերի. ան կը վերաբերի ներկայ գոյութեան, որովհետև, ինչպէս ըստ ենք, եթէ մարդուն ձեռվ անմահ է, հիմա ալ անմահ է: Հետեաբար, մարդ ամէն անգամ որ կը սկսի ապրիլ այնպէս որ իրը թէ անմահ ըլլար, կ'ենթարկէ ճշմարտութիւնը կեանքի փորձին և անոր գործնական հետեանքներուն սահմաններուն մէջ կը փնտոէ անոր վաւերականութեան ստուգումը: Աշխարհ մը ուրուն մէջ թոյնը գօրաւոր ըրաւ մարդիկը և

անունդները զանոնք կործանեցին աւելի անբանաւոր պիտի չըլլար քան աշխարհ մը որուն մէջ նենգութիւնը մեծ նկարագիրներ չինեց մինչդեռ կիրարկուած ճշմարտութիւնը յանգած է անարգ ողիի և անարժան կեանքի: Արդարեւ, մենք թոյն կը կոչենք արսէնիքը ճիշդ որովհետև մեզ կը կործանէ և լաւ հացը՝ սնուենք, որովհետև մեզ կը կազմէ: Այսպէս գործնական կեանքի մէջ ճշմարիտ կը համարենք այն բաները որոնք, իրը ճշմարիտ առնուած, օգտակար են. իսկ սուտ այն բաները որոնք պիտի չստուգուին կեանքէն իրենց ունեցած տարբերութեամբ: Այն երկրաչափը որ, կամուրջ մը շինելու ձեռնարկած է, նախ և առաջ կը ծրագրէ իր յատակագիծերը ուսողութեան օրէնքներուն համեմատ, յետոյ զանոնք կ'ենթարկէ փորձագէտներուն վաւերացմանը, և յետոյ շինելով իր չէնքը, կը սպասէ ամբողջացած գործին մէջ իր դատողութեան վերջնական հաստատութիւնը, մնալով գործածութեան փորձը, իր ընթացքին մեթոսով կը ցուցնէ ճշմարտութեան ամէն ըստուգումի առաջնորդող ճամբան: Թող մարդ այսպէս փորձէ անմահութեան հաստատումը: Թող իր լաւագոյն դատողութիւնը վճռէ թէ ճշմարիտ է, և իր դատողութիւնը ապացուցուի տեսանողներուն վճիռով, և յետոյ թող սկսի ապրիլ այնպէս իրբեւ թէ անմահ ըլլար: Հաստատող հետեանքները ապահովաբար պիտի գան: Այն մարդը որ կ'ապրի իրբեւ թէ անմահ ըլլար, կ'ապրի տիեզերքի մը մէջ ուր բարձրագոյն հոգեոր արժէքները մշտնջենական են, աստղերուն աճումէն և կազմալուծումէն վերջն ալ ապրող. ուր անհատականութիւնը, իր մէջ ըլ-

լայ թէ ուրիշներուն մէջ, անհունօրէն թանկագին է և ունի յաւիտենական արգասիքներ. ուր նկարագիրը գերազոյն հոգածութիւնն է կեանքի, որոնց անունով ուրիշ ամէն բան կրնայ գոհաբերուիլ. ուր ընկերային ծառայութիւնը բնաւ պարապ տեղը չի կրնար ըլլալ, եթէ ան կ'արձանագրուի աւելի լաւ դարձուած մէկ մարդու մէջ անգամ, և ուր, բարոյական դատերու հանդէպ ամէն անձնութրութեամբ, չենք պեղեր արուեստական լիճեր որպէսզի լեցուին մեր սեփական զոյլերովը, օտար տիեզերքի մը հետ անյոյս պայքարի մը մէջ, այլ յաւէտ կը շինենք փոսեր որոնց մէջ պիտի վազէ կենդանի Աստուծոյ յաւիտենական հոգեոր նպատակը դէպի իր շատ հեռաւոր աստուծային վախճանուը: Անմահութեան ճշմարտութիւնը կը մեծցնէ կեանքը:

Հոս ճիշդ է որ Յիսուս կուտայ իր ամենէն իրական նպաստը յաւիտենական կեանքի վրայ հաւատաքին: Անոր անմահութեան ուսուցումը ունի զինուի հեղինակաւոր արժէք հոգեոր տեսանողի մը կողմէ, բայց անոր կեանքը ունի ստուգիչ արժէք, մեզի ներկայացներով միանգամ ընդմիշտ կեանքէ արտադրուող նկարագրի այն տեսակը իրը թէ անմահութիւնը ճշմարիտ ըլլար: Առնուազն մէկ անգամ, անոր մէջ, տեսած ենք թէ ինչ կը նշանակէ յաւիտենական կեանքի ապահովութիւնը նկարագրի համար: Որովհետև Յիսուս կը տարբերի նոյնիսկ Սոկրատէն անով որ մինչ Սոկրատ փաստեց ի նպաստ անմահութեան և անոր հաւատաց, Յիսուս երբեք չի կեցաւ փաստելու համար, այլ զայն առնելով իրը ընդունուած, իրբե անմիջական և անառարկելի յայտնի ճշմարտութիւն, ապրեցաւ այնպէս իրը թէ ան անկասկած ճշմարիտ ըլլար: Աւրիշներ վերլուծած են յաւիտենական կեանքի հաւատալու պատճառները, ինչպէս կրնային վերլուծել Մոցարդի մէկ ժողովածոն և վիճարանիլ աննոց գեղեցկութիւնը ցուցնելու փաստերուն վրայ. բայց Յիսուս անմահութիւն ապրեցաւ, ինչպէս մարդ մը կարենար Մոցարդ նուագել կատարեալ կերպով: Հետեաբար երբ մէկը նկատողութեան կ'առնէ Յիսուսի նկարագիրը, որուն մէջ Աստուծոյ վրայ հաւատաքը եղաւ առէջը կամ մշտուտը իսկ յաւիտենական կեանքի ստուգութիւնը թեզանը, կը տեսնէ կատարեալ ստուգութիւնը անմահութեան վրայ հաւատաքին: Այս է ար-

դիւնքը մարդկային կեանքին մէջ երբ անձնական յաւերժութիւնը տեսաբանութենէ կ'անցնի նկարագրի ստուգիչ փորձաքարին: Թող մարդ սկսի այնպէս մը ապրիլ որ իրը թէ պիտի չմեռնի, և անոր հոգեոր յատկութեան զօրութիւնը կը բարձրանայ ապահով աստիճաններով դէպի Քրիստոսանմանութիւն. թող մարդ սկսի այնպէս ապրիլ իրը թէ մահը ամէն բանի վախճանն ըլլար, և նոյնիսկ անոնք որ պաշտպանած են այս գաւանանքը կը խոսուովանին թէ նկարագրի ամենէն խօր չարժառիթները կ'ալօտանան, և թէ ընկերային ծառայութիւնը յուսախափ կ'ըլլայ հիսամթափութեամբ: Մարդ անձնական յաւերժութեան մասին անհաւատութեան անձնատուր ըլլալէ առաջ, թող նըկատի առնէս սա արդիւնքը թէ արդպիսի աշխարհի մը մէջ նենգութիւնը կը շինէ լաւագոյն նկարագիրը և ճշմարտութիւնը զայն կը կործանէ:

Հետեաբար ոչ ոք պէտք է կանգ առնէ հանդերձեալ կեանքի տարտամ կարելիութեան հետ: Անմահութիւնը, ենթագրութիւն մըն է, եթէ կուզէք, բայց ձգողութիւնն ալ ենթագրութիւն մըն է, և անոնց չուրդ երկու նկատողութիւններն ալ կըուուն և ապահովիչ կը խմբուին ի պաշտպանութիւն: Տիեզերքի բանաւորութիւնը զրաւական է մարդու անմահութեան: առանց անոր Աստուծոյ բարերարութիւնը միտք չը գար. հոգեոր տեսանողներուն զինուը կը հաստատէ զայդ. և երբ կ'ենթարկուի կեանքի ստուգիչ փորձաքարին, կը շինէ ամենէն գոեմ նկարագիրը:

Մակը մեծ արկած մըն է, բայց ոչ ոք պէտք է երթայ առանց համոզուելու անոր ելք մը ունենալուն: Հաւատաքի մարդը կը ընայ անոր նայիլ ինչպէս Քոլոմպոս նայեցաւ իր առաջնին ճամբորդութեանը Սպանիոյ ծովեզրներէն: Ի՞նչ կայ ծովէն անդին: Զը կրնար պատասխանել. իր բոլոր մասնաւոր ակնկալութիւններն ալ թերես սիսալ ըլլան. բայց անոր հասկցողութեամբ թափանցողութիւնը ներկայ իրողութիւններու յստակ նշանակութիւններուն մէջ կրնան զինքը համոզել անկասկած թէ ծովը ուրիշ եղերք մը ունի: Այսպիսի վստահ հաւատաք, այդպէս հիմունած բանաւոր փաստերու վրայ, պիտի փոխուի տեսանողութեան, երբ, անհաւատութեան բոլոր արհաւիրքին դիմաց տեսանողներուն յոյսը կը վարձատուի նոր երկրամասին տեսիլքովը:

(Վերջ)

X

Ի Ն Զ ՈՒ

Խաղաղութեան հրեշտակներուն .

Կը զարմանամ թէ ինչո՞ւ մարդն ունենայ Աստուած իմ
Տըխեղծ, տըձեւ ու խանձած, նրէւ հոգի ու մարմին,
Յատկութիւնով մակաբոյծ, ու դիմակով խռուիլակ,
Որոնք մտիս մէջ կուտան իրեն ձեւ մը այլանդակ:

ԶԵ՞ որ օր մը զայն Քեզի նըմանցուցիր, վառելով
Հոգւոյն լապտերն հոգիեղ. ու հարազատ պատկերովդ
Ստեղծեցիր, որ ըլլայ միւս կատարեալ ու բարի...
Բայց հեռացած ալ Քեզմէ, ան ինքիննին կը նմանի:

Տարօրինակ է իրաւ: Տես ան ի՞նչպէս կ'առնէ զոյն.
Կ'ըլլայ երկշուս, կ'ըլլայ բիրս, կ'ընէ լեզուն մեղը ու բոյն,
Իր նըմանին, իր եղբօր, եւ ինքիննին շատ անզամ
Հայրայրելով դրժպլնի կեանի մ'անանուն, անկենդան:

Գիտեմ թէ մարդն աւելի չարադէմ է, քան բարի,
Ու իր մէջ լոկ, ո՞վ իրաւ, կրնան ապրիլ միասին
Զուրն ու կրակ հակադիր: Ո՞հ մի՛ բողուր Աստուած իմ
Որ բորբոքի կըրակն իր, կամ զուրերուն տակ մարի,

Խանդն երկընելն, օր մ'ինկած, իր զուրերուն կատադի:

Գ. ՄՈՒՇԵՆՑ



Խ Ր Ա Տ

Հայ մամի անգերազանց ներկայացուցիչ

ՏԱՀԱՆ Ո. ՊԵՐՊԷՐԵԱՆԻՆ

Սոյիր գրեթէ կեանին ինծմէ եւ ես ըսիր զայն կըրկին,
Որ քաղցրանայ աւելի դաշտին, ծովուն, երկթնին
Պատկերը իմ նոզւոյս մէջ, որ աւելի սեւեռուն
Դառնայ միտքս Խորհուրդին եւ նայուածքս իրերուն:

Որ զիս ընես աւելի Գաղտնիքներուդ նետամուս,
Որ հասկընամ թէ երազն է իրական, կեանին է սուս.
Գողգոթայի ճամբայէն պիտի Մարդը բարձրանայ,
Թէ արցունիք ոչ մէկ ժիք պիտի անծիլ չըմընայ:

Թէ հառաջները ցափի պիտի՝ ընդունայն չըկորչին,
Ցիւատակներն ու սէրերն չըլուծուին ծոցն Ոչինչին.
Թէ ամէն բան կը դիմէ նպատակի մը վլսեմ...
Համոզումովն այս նիմա հանդարտուրեամբ կը սպասեմ:

Նոյեմբեր 1951

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Գ Ա Ր Ո Ւ Ն

Գարուն է նորէն,
Երազ է աշխարհն,
Ծաղկած հողն ու քար.
Սարերը ելլեմ,
Սիրըս օրօնեմ:

Սիրըս օրօնեմ,
Բերկուրեան յանզով,
Գոյներու խաղով,
Սիւին սրբինզով,
Զուրերու տաղով:

Գարուն է նորէն,
Խըսացած երազ,
Երկինն է փեսայ
Եւ երկիրն ալ հարս,
Լեռներն կը պարեն...
Ինչ հարսնիք է այս:

Մայիս 1951 Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱԶԱՏՈՒՐ ԴՈՒՔՍ ԱՆՏԻՈՔԻ (1068 — 1072)

1068ին, Ռումանոս Տիոֆէն կայսրը Անտիոքի դուքս^(*) անուանեց Խաչատուրը⁽¹⁾:

Ռութիլ շատերու պէս, մանաւանդ Ժ. դարէն սկսեալ, Տաւրոսի և Հրազդակայ սահմաններուն մէջ, Խաչատուր ալ Հայ էր⁽²⁾: Մանօթ է արդէն թէ Ռումանոս Տիոֆէն այդ Հրազդանին զինուորական հրամանատարութեան պաշտօնին կոչեց բազմաթիւ Հայէր⁽³⁾: Կայսրը իր ընտրութիւնը կեղրոնացուցած էր Խաչատուրին վրայ, վասնզի ան ազնըւական, խելացի և գործունեայ անձ մընէր, և իրը զօրավար՝ քանից տուած էր իր պաղարիւնութեան և տաղանդին ապացոյցները: Բայց Խաչատուրը բախտաւոր չեղաւ իրրեւ Անտիոքի դուքս: Պաշտօնի կոչուելէն տարի մը ետք, 1069ին իսկ, ձախողութիւն մը կրեց Թուրքերէն, որ իկոնիոյ (Գոնիա) աւարառութենէն կը վերադառնային⁽⁵⁾: Այն ատեն Ռումանոս Տիոֆէնէն հրաման ստացած էր Մոպսուեստիոյ (Մամեսուիա) մէջ Թուրքերուն սպասել, անոնց նահանջի գիծը կտրելու համար: Խաչատուր յաջողեցաւ Թուրքերուն տարած աւարը ետ առնել, բայց Թուրքերն ալ յաջողեցան Խաչատուրէն խոյս տալ և Հալէպ հասան՝ Սարուանդիքար լերան կիրճերէն անցնելով⁽⁶⁾:

(*) [Հայէրէն նաև «տուկ» և «դուկ»: Կը նշանակէ 1. առաջնորդ, 2. առաջնորդ պատերազմի մէջ, այսինքն զինուորական հրամանատար (Ե. Թ.):]

(1) Attaliatès, p. 137, 172, Psellos, éd. Renault, Romain Diogène, c. 34. Skylitzès, 684, 703, Bryenne, I, c. 21, Zouaras, III, 705: Հմմատ. Laurent, Byzance et les Turcs Seldjoucides (1914/19), p. 41:

(2) Հմմատ. Լոռան, անդ, էջ 67 լըրդ..

(3) Հմմատ. Լոռան, անդ, էջ 43.

(4) Տես ժան. 1ի մէջ յիշուած աղքահերները:

(5) Հմմատ. Lebeau-Brosset, Histoire du Bas-Empire, XIV, 694:

(6) Attaliatès, p. 136-38, Skylitzès, p. 284. Zouaras, III, 694: — Սարուանդիքար (Sarbandikos) Ամանոսի հիւսիսային մասն է, Ramsay, Hist,

Երկու տարի ետք, 1071ին, Խաչատուր Ռումանոս Տիոֆէնի կուսակիցներուն հետէր, երբ այս վեհապետը, որ Ալփ-Արսլանի ձեռքը գերի ինկած էր, ազատ արձակուելէ վերջ ստիպուեցաւ զէնքի զիմել նորէն բարձրանալու համար կայսերական գահը, ուր նատած էր Միքայէլ ի. Տուկիծ (Ducas, Ducas): Այս պայքարին մէջ, Ռումանոս Տիոֆէն զիւրաւ կրցաւ թէ զինուոր և թէ գրամ գտնել: Իր նախկին զինուորը ները գունդագունդ իրեն միացան, իսկ գրամը արմելեան նահանգներուն հանրային գանձարաններն են որ հայթայթեցին: Բայց Ամասիոյ առջև պարտուեցաւ Կոստանդին Տուկիծէ, որ Յովհաննէս կեսարի կրտսեր որդին էր և հետեւաբար զարմիկը Միքայէլ ի. կայսեր: Ռումանոս Տիոֆէն, այս պարտութենէն վերջ, Տյորոպոն ամբոցը⁽⁸⁾ ապաստանեցաւ, ուրկէ զինքը ազատեց Խաչատուր, առ ի երախտազիտութիւն հանգէպ այն կայսեր՝ որ զինքը զինուորական ամենաբարձր աստիճանին բարձրացուցած էր, կարևոր ուժով մը անոր օգնութեան փութաց⁽⁹⁾:

Ինքնարերաբար է որ Խաչատուր Ռումանոսը աղատած էր. բայց անոր օգնելով ապստամբ նկատուեցաւ յաչս Միքայէլ ի. կայսեր. զէթ այս կարծիքը ունին Psellos և Nicéphore Bryenne պատմագիրները: Հաս Attaliatèsի (էջ 172) և Skylitzèsի (էջ 703), Միքայէլ ի. կայսրն է որ Խաչատուրը զըրկած էր Ռումանոսի զէմ, որ Տյորոպոն ապաստանած էր: Բայց Խաչատուր, զգած-

Geog. of Asia Minor, p. 385: [Սարուանդիքար = Սարաւանդի (էջ 129): Քարը = քարն Սարանդի (Սամուել Անեցի), էջ 141, և Սարուանդիքարն զիւրակ մըն էր, որ կեազուր Տաղի մէկ կիրճէն անցնող ուղիին վրայ կ'իշխէր. տես Paul Deschamps, «Le Château de Servendikar en Cilicie, le défilé de Marris et la frontière du Comté d'Edesse» (Syria, XVIII (1937), p. 379-388): Հմմատ. Նաև E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches Von 363 bis. 1071, էջ 121 ժան. 2, ինչպէս և Ալիշան, Սիստան, էջ 576 (աշխարհագրական ցանկին մէջ): Ե. Թ.]:

(7) Psellos, c. 32, Skylitzès, p. 702, Bryenne, I, c. 21, Lebeau XIV, 507;

(8) Psellos, c. 34, Skylitzès, p. 703; — Tyropoionի տեղը է Հջուածած. Հմմատ. Ramsay, անդ, 141, 356ի Rott, Kleinasiatische Denkmäler, քարտես G 5:

(9) Psellos, c. 34, Bryenne, I, c. 21:

ուելով Տիոժէնի գժբախտութիւններէն և յիշելով թէ ան էր որ զինքը Անտիոքի դուքս անուանած էր, փոխանակ անոր գէմ կը ու ուելու համաձայն իր ստացած հրամանին, անոր կողմը անցած էր: Իր զինուարներէն անոնք, որ այս պարագային չէին ուղած իրեն հետեւիլ և հաւատարիմ մնացած էին կ. Պոլսոյ կայսեր, ետ զրկուած էին առանց ձիու, առանց զէնքի և առանց կազմածի:

Շատ չանցած, կը շարունակէ Attaliatès, նկատելով որ աշունը կը յառաջանար, Խաչատուր Ռոմանոս Տիոժէնի հետ կիլիկիա վերագրածաւ, ձմեռը հոն անցընելու համար: Իր նպատակն էր խաղաղօրէն իր բանակը վերակազմել և հոն սպասել այն օդնական ուժին զոր թուրքերը խոստացած էին: Բայց սխալ մը գործեց, ձմրան եղանակին Փոքր - Ասիոյ զանազան կողմերը ասպատակ գունդեր չղրկելով: Արդարեւ, Ռոմանոս Տիոժէնի զօրքերը կրնային Պիսիդիա, Խսաւրիա, Լիկաոնիա, Պաֆլագոնիա, Հանորիագա և մինչև իսկ Բիւթանիա յառաջանալ, հարստահարել ժողովուրդը, հետապնդել կայսերական զօրամասերը և արգելք ըլլաւ անոնց վերակազմութեան: Խաչատուր ուրիշ կերպ մտածեց. կարծեց որ ապահով էր կիլիկիոյ մէջ, Տաւրոսի կիրճերուն ետեւը⁽¹⁰⁾, և հոն անգործ կցցաւ, ձեռնարկելով պաշտպանողական պատրաստութեանց⁽¹¹⁾, զոր կը զիւրացնէր Անտիոքի և չըջակայքին տիրապետութիւնը⁽¹²⁾, սպասելով այն օգնական ուժին, զոր իրեն պիտի զրկէր սուլթանը⁽¹³⁾: Իր այս վարմունքով, Խաչատուր իր հակառակորդներուն ամէն ազատութիւն թողած եղաւ որ բանակ մը հաւաքեն և կազմակերպեն: Այս գործը գլուխ հանեց Անդրոնիկ Տուկիծ, Յովհաննէս Կեսարի երէց որդին, որ իր զինուարներուն տուաւ ինչ որ կուտելու համար պէտք էր, առատաձեռնօրէն վարձատրեց զանոնք, մանաւանդ հաւաքեց արեւմուտցի բազմաթիւ վարձկան զինուարներ,

⁽¹⁰⁾ Attaliatès, p. 172, Psellos, c. 34, Skylitzès, p. 703, Zouaras, III. 705.

⁽¹¹⁾ Psellos, c. 34, Bryenne, I, c. 21.

⁽¹²⁾ Bryenne, I, c. 23.

⁽¹³⁾ Attaliatès, p. 172, Skylitzès, p. 703, Bryenne, I, c. 25, Zouaras, III. 705.

օգնութեամբ ֆրանկ կրիստոնի⁽¹⁴⁾, որ Ռոմանոս Տուկիծն վրէժ լուծել կ'ուզէր, զինքը կողմը աքսորուած ըլլալուն համար⁽¹⁵⁾:

Երբ այս գէպքերը տեղի կ'ունենային, Միքայէլ է. Տուկիծ⁽¹⁶⁾ կայսեր բացորոշ կամքին համաձայն, կ. Պոլսոյ կառավարութիւնը Ռոմանոս Տիոժէնի հետ բանակցեցաւ համաձայնութեան եզր մը գտնելու համար⁽¹⁷⁾: Ռոմանոս պատասխանեց, թէ կը պահանջէր որ ամբողջ կայսրութիւնը իրեն յանձնուի: Ասոր վրայ Տուկիծ ստիպուեցաւ զէնքի դիմել. բայց յանձնարարեց կարելի եղածին չափ լաւ վարուիլ Տիոժէնի հետ⁽¹⁸⁾ և «եկեղեցականներու»⁽¹⁹⁾ Քաղկեդոնի, Հերակլիոյ և Կողոնիոյ մետրապոլիտներուն⁽²⁰⁾ պաշտօն յանձնեց իր այս հրամանին գործադրութեան հսկել:

Անդրոնիկ Տուկիծ, որուն յանձնուած էր պատերազմը վարելու գործը, իր յարձակումով յանկարծակիի բերաւ Խաչատուրը: Այս վերջինը կը սպասէր որ Անդրոնիկ յառաջանայ սովորական ճանապարհով, որ Պողանդոսէն (Պողանթի) կ'անցնէր⁽²¹⁾: Անդրոնիկ Խսաւրիայէն և ծովեզերքէն անցաւ և յաջողեցաւ իր յառաջխազացումը ծառուկ պահել իր հակառակորդէն և Տարոսն հասաւ, երբ մարդ տեղեկութիւն չունէր⁽²²⁾: Խաչատուր փութաց անոր գէմ ելլել, բայց իր բանակը, որ փոքրաթիւ էր և սակաւարժէք քան Անդրոնիկինը, յաղթուեցաւ⁽²³⁾ ճակատամարտի մը մէջ, ուր ֆրանք կրիստոնի չնորհիւ Անդրոնիկ տարաւ յաղթանակը⁽²⁴⁾: Խաչատուր ձիէն ինկաւ, բըռնըւեցաւ և տարուեցաւ Անդրոնիկ Տուկիծի առջև⁽²⁵⁾, որ մեծարանքով վարուեցաւ անոր հետ և ազատ արձակեց զայն պատ-

⁽¹⁴⁾ Attaliatès, p. 173, Skylitzès, p. 702, Psellos, c. 36, Bryenne, I, c. 23, Zouaras. III, 705.

⁽¹⁵⁾ Skylitzès, p. 703, Laurent, Byzance et les Turcs, p. 65.

⁽¹⁶⁾ Psellos, c. 35:

⁽¹⁷⁾ Psellos, c. 35. Bryenne, I, c. 22.

⁽¹⁸⁾ Psellos, c. 36:

⁽¹⁹⁾ Psellos, c. 37:

⁽²⁰⁾ Skylitzès, p. 704:

⁽²¹⁾ Attaliatès, p. 173, Psellos, c. 36, Skylitzès:

⁽²²⁾ Նախարար Ճանաթառթեան մէջ յիշուածալքիւրերը և Bryenne, c. 23, 24;

⁽²³⁾ Attaliatès, p. 174:

⁽²⁴⁾ Psellos, c. 39, Bryenne, I, c. 24:

⁽²⁵⁾ Attaliatès, p. 174:

ուոյ խօսք առնելէ վերջ⁽²⁶⁾: Psellos այն ատեն Անդրոնիկին գրեց և յանձնարարեց որ ձեռքէ չփախցնէ այդ «նենգամիտ Խաչատուրը», այդ «գաղանը», որ «ո՛չ թէ օձին մէկ մասն է, այլ նոյնինքն վիշտին զլուխը»⁽²⁷⁾: Դիւրին է հասկնալ թէ ինչո՞ւ համար Խաչատուր, իբր չնորհակալութիւն Անդրոնիկի, որուն բարեացակամութիւնը զինքը կը պաշտպանէր այսպիսի ատելութեան մը դէմ, անոր նուիրեց թանկարժէք քար մը, զոր Անդրոնիկ յետոյ պարգեւեց Մարիա կայսրութիւնը⁽²⁸⁾:

Իր զօրավարին գերութենէն ետք, Ռոմանոս Տիոֆէն կայսրը խելակորոյս ինք-զինքը պաշտպանեց Ստանայի⁽²⁹⁾ մէջ, ուր շատ չանցած իրեն դաւաճանեցին իր յուսաբեկ հետեւորդները: Յայտնի չէ թէ Խաչատուր ի՞նչ եղաւ ատկէ վերջ, ո՛չ ալ թէ ի՞նչպէս և ե՛րբ մեռաւ, բայց Psellosի և Bryenneի այնքան յստակ և ճշգրիտ տեղեկութիւնները իր գերութեան և Անդրոնիկի իրեն հանգէպ ունեցած վարմունքին մասին թոյլ չեն տար ո՛չ ըսել թէ ճակատամարտին մէջ սպաննուեցաւ⁽³⁰⁾ և ո՛չ ալ թէ, հակառակ այն պարտութեան զոր կրեց Ռոմանոս Տիոֆէնը պաշտպանելուն համար, Խաչատուր Անտիոքի գուշը մնաց մինչև 1072 և այդ տարին Բիւզանդիոնէն զրկուած մէկու մը կողմէ սպաննուեցաւ⁽³¹⁾: — Իրականութիւնը այն է որ Խաչատուր բռնուեցաւ Ստանայի մէջ և թէ անկէ ետք պատմութիւնը լուր կը մնայ իր մասին: Ահա ասոնք են միայն այն տեղեկութիւնները զոր կարելի է քաղել մեզի հասած յոյն պատմիչներէն:

Այն կարծիքը, որուն համաձայն Խաչատուր մինչև իր մահը Անտիոք մնացած է, արձագանգ մըն է այս զօրավարին մասին Հայկական աւանդութեան: Արդ, եթէ կրցայ իր պատմութիւնը ուրուազծել առանց ո՛չ իսկ մէկ հայ հեղինակ յիշելու,

(26) Psellos, c. 40.

(27) Historiens fran. des Croisades, I, 47.

(28) Bryenne, I, c. 24.

(29) Attaliatès, p. 174.

(30) Skylitzes, p. 703, Zouaras, III, 705 Բառը շոր կը զործածեն միանդամայն կը նշանակէ «բռնել» և «սպաննել»: Հմմտ. Laurent, Byzance et les Turcs, p. 41.

(31) Jorga, Geschichte d. Osman. Reiches, I, 68:

պատճառն այն է որ, եղական երեսոյթ, այս Հայուն մասին, որ Անտիոքի գուշը եղած է, որ այնքան ազնուորէն իր անկեալ վեհապետին հանդէպ անձնութիւնը ցոյց տուած է, ունէ յիշատակութիւն չկայ հայկական աղքիւրներուն մէջ: Արդեօք իրապէս անձանօթ մնացած է Հայերուն թէ հայ պատմիչները իր մասին գրած են Խաչատուրէն տարբեր անունով մը յիշատակելով զինքը: Արդեօք Յոյնե՞րը միայն իրեն տուած են այս անունը, որ սակայն անառկելիորէն հայկական է⁽³²⁾:

Հայոց պատմութեան մնջի ժամանակակից հեղինակները չէին կրնար այս մըտածումը չունենալ, հետեւաբար փնտուած են Անտիոքի գուշը մը, որ կրնայ նոյնացուիլ Յոյներուն յիշած Խաչատուրին հետեւ զայն գտած են Մատթէոս Ուռհայեցիի Ղ.Ա. գլուխին մէջ⁽³³⁾: Ըստ այս պատմագրին, 1065ին Անտիոքի գուշը Պեխտ, որ Հայ էր, ազնուորէն Եղեսիոյ օգնութեան փութաց Թուրքերուն յարձակման դէմ պաշտպանելու համար քաղաքը և քիչ մնաց որ այդ կոիւին մէջ սպաննուէր, Եղեսիոյ յոյն զօրավարներուն նենգամտութեամբ: Այս հատուածին հիման վրայ, Հայ պատմաբանները հետեւեալ կերպով տրամարանած են: Ըստ Մատթէոս Ուռհայեցիի, 1065ին, Անտիոքի գուշը հայազգի Պեխտն է: 1068ին, ըստ Բիւզանդացի՝ պատմագրիրներու, Անտիոքի գուշն է հայազգին Խաչատուր: Հետեւաբար, երկու անձերը նոյն անձն են բացայայտորէն: Յոյները զայն յիշած են իր հայկական անունով, մինչ Ուռհայեցի անոր տուած է իր բիւզանդական պատուանունը՝ Vestis (= Պեխտ):

Եւ Յոյներուն ծանօթ Խաչատուրին վերագրուած են ինչ որ Հայերը ըսած են Պեխտի և նոյնիսկ Եպիփատ անուն մէկու մը մասին, այս վերջինը նոյնացնելով առա-

(32) Attaliatès, p. 137, 172, Psellos, c. 38, Skylitzes, p. 684, 703, Bryenne, I, c. 21, 24, Zouaras, III, 693, 705: Յոյն հեղինակները հազիւթէ աշատած են իր անունը գրելով Khatatourios, Khoutatarios: [Խաչատուրը]ին յունաբէն ուրիշ ձեռքուն մասին տես յօդուածին վերջին ծանօթութիւնը: Ծ. Թ.]:

(33) Dulaurierի թարգմանութիւն [= Մ. Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Բ. տիպ, Վաղարշապատ, 1898, էջ 157 և յըրգ.:

ջինին հետ, որովհետև երկու անուններն ալ-
վեստ բառին աղաւաղումներն են և նոյն
անձը կը մատնանշեն⁽³⁴⁾: Բայտ այսմ, Խաւ-
չատուրի համար ըսուած է թէ Անի ծնած
էր⁽³⁵⁾, անոր համար որ Ուռհայեցի, զլ-
զմթ. [= էջ 214 հայերէն բնագրին, ուր
գործածուած է նաև Խպիստ ձևը (Մ. Թ.):] Եպիխտի համար կ'ըսէ թէ Շիրակէն եկած
էր, որուն մայրաքաղաքն էր Անի: — Նոյն
Ուռհայեցիին համաձայն (զլ. ՂԱ.), Խաւ-
չատուրին Անտիոքի դուքս անուանման
թուականը իջեցուցուած է մինչև 1065, ինչ
որ շատ հաւանական չէ, վասնզի եթէ Ուռ-
հայեցիին հետեւելով ընդունիլ պէտք ըլլայ
թէ Պեխտ անուն մէկը 1065ին Անտիոքի
դուքս էր, նոյնքան զօրաւոր պատճառնե-
րով պէտք է ընդունիլ թէ 1067ին Անտիոքի
դուքսը կը կոչուէր Նիկիփորից⁽³⁶⁾, որ
այդ թուականին պաշտօնանկ եղաւ, ժա-
մանակ մը Անտիոքը կառավարելէ ետք: Attaliatès կը պատմէ (էջ 181) թէ Նիկիփո-
րիցէ Անտիոք մեկնած էր Կոստանդիին Տու-
կիծի օրով (1059-67), չնորհազրկութեան
մը հետեւանքով: Արքունիքէն հեռացուած
էր և Անտիոքի դուքս կարգուած: Իր պաշ-
տօնավարութիւնը խոռվութեանց և անկար-
գութեանց շրջան մը եղաւ: Թշնամութիւն-
ներ պատրուակելով՝ ամրոցներ շինեց,
Սարակինոսները զրգուեց, որ յենակէտներ
հաստատեն միջնարերդին վրայ յարձակելու
համար: Անկարող անոնց զէմ կոռուելու,
զանոնք զրգեց որ թշնամանան Բիւզան-
դացւոց հետ և յարձակին բիւզանդական
սահմանագույխին զրացի քաղաքներուն
վրայ: Անտիոքի բնակիչներուն հանգիստը
խոռվեց բռնազրաւումներով եւ սոսկալի
հարկապահանջութեամբ: Իր հրամանատա-
րութենէն պաշտօնանկ ըլլալէ ետք, ատեն
մը վերջ նորէն հոն զրկուեցաւ, բայց նո-
րէն նոյն ոճրապարտ վարմունքն ունեցաւ:
Կայսեր մահէն վերջ (1067), կայսրուհիին
իշխանութեան օրով, Անտիոքի մէջ ձեր-
բակալուեցաւ և բանտարկուեցաւ: — Իր

անմիջական յաջորդն եղաւ Նիկիփոր Վո-
տանիատ՝ (Botaniete) ապագայ կայսրԸ⁽³⁷⁾:
Յետոյ Խաչատուր յաջորդեց Նիկիփորի,
երբ Ռոմանոս Տիոֆէն կայսր եղաւ⁽³⁸⁾,
բայց ո՛չ այս թուականէն առաջ: — Այս
պայմաններուն մէջ, որպէսզի կարելի ըլ-
լայ հաստատուրէն ըսել թէ Պեխտ, որ 1065ին
Անտիոքի դուքսն էր, և Խաչատուր, որ
1068ին Անտիոքի դուքսն էր, միենոյն
անձն են, պէտք է ունենալ ժամանակակից
ազրիւր մը, ուր երկու անձերը նոյնացուած
ըլլան: Եւ այսպիսի աղբիւր մը չունինք:

Միւս կողմէ զարմանալի թուած է,
որ Անտիոքի դուքս մը կիլիկիոյ և Տաւ-
րոսի մէջ, այսինքն Անտիոքէն բաւական
հեռու, կրցած ըլլայ գործել, ինչպէս Խա-
չատուր: Հետեւաբար, ըսողներ գտնուած
են, թէ Պեխտ-Խաչատուր Անտիոքի կառա-
վարիչ եղած է, բայց ոչ թէ մեծ Անտիո-
քի, այլ կիլիկիո-Խոսաւրիայի մէջ փոքր
Անտիոքի մը (Antiochette)⁽³⁹⁾: Եւ ասիկա,
հակառակ բիւզանդացի մատենագիրներուն
որ, ժամանակակից կամ պալատական և
հետեւաբար քաջատեղեակ, ճիշդ հակառակը
ըսած են: Պատճառն այն է որ ծանօթ է Ե-
պիխտ անուն մէկը, տէր՝ Անդրիունի (Ան-
դրուն), ո՛չ հեռու Անտիոքէ, որ այս փոքր
քաղաքին մէջ մեռաւ 1078-79ի ատեն-
ները, սպանուելով նենգամիտ Յոյնէ
մը⁽⁴⁰⁾: Պատճաբանները այս հայ իշխանը,
որ կործանած էր իր երախտազիտութիւնը
ցոյց տալու և հաւատարիմ մնալու համար
յոյն կայսեր մը, որ իրեն բարիք ըրած էր,
չարանախանձ և ապերախտ Յոյնի մը ոճի-
րին զոհ ցոյց տալու փորձութեան չեն
կրցած զիմազրել: Հետեւաբար Անդրիունի
Եպիխտ փոքր իշխանը նոյնացուցած են⁽⁴¹⁾
Խսաւրիոյ Անտիոքին Պեխտ - Խաչատուր
փոքր իշխանին հետ, որ իրը զօրավար նը-

(34) Attaliatès, p. 96-101, Skylitzès, p. 262-3,
Aboulfaradj, Syr., p. 274:

(35) Attaliatès, p. 172, Psellos, c. 34, Bryenne,
I, c. 21:

(36) Alischan, Léon le Magnifique, (1888), p. 12
և Sissouan (1889) p. 43: [= Սիուան, էջ 46.
«Խամար զօրավար... իշխան Անդրիուն Կրազեան,
ի ծովեցեր Խամար կամ Քարուն Կիլիկիոյ» (Մ. Թ.)]:

(37) Matthieu d'Edesse, tr. Dulaurier, c. 112
[= Ուռհայեցի, էջ 214], Brosset Lebeau, XIV, 72:

(38) Brosset Lebeau, XIV, 441:

(39) Brosset Lebeau, XIV, 441 և XV, 71:
(40) Dulaurierի թարգմանութիւն, ժամանական պատճենագիրների պահպանութեան մը, Անտիոքին, Lebeau-Brosset, XIV,
440:

(41) Brosset Lebeau, XIV, 440:
«Եւ ժամանակակիցներուն համար շատ
անժողովրդական յայն նախարար մը: Հմմտ. Le-
beau, XIV, 440:»

շանակելի ծառայութիւններ մատուցած էր
Ռումանոս Տիոժէնի:

Եթեոյ, ի նպաստ ազգային ուրիշ նը-
պատակներու օգտագործելու համար այս
երեկոյի պատերազմիկին, Յունաց կայսեր
այս անձնութէր ծառային փառքին և արժա-
նիքներուն մէկ մասը, ոմանք զայն ազգա-
կան յայտարարած են Ապղարիպի(42), ո-
րուն տիրապետութեան տակ գտնուած էր
Տարսոն(43): Ոմանք ալ ըստ են(44) թէ
եղբայրն էր Թորոս և Կոստանդին իշխան-
ներուն, որ զաւակներն էին կիլիկեան Հա-
յաստանի հայ արքայական տան հիմնադիր
Ռուբէնի: Այս ազգականութեամբ Պեխտ-
Եպիխտ-Խաչատուր այս հարստութեան իշ-
խաններուն համար կ'ըլլար երեկոյի նախ-
նիք մը, որով կարելի էր պարծենալ: Սա-
կայն տարօրինակ է որ Խաչատուր, 1067էն
իսկ ի վեր նշանաւոր զօրավար, զաւակն
ըլլայ Ռուբէնի, որ պատմութեան մէջ երե-
ւան կ'ելէ 1078ին միայն, երբ տակաւին
շատ երիտասարդ էր(45): Վերջապէս, նոյն
Պեխտ-Եպիխտ-Խաչատուրը, եթէ եղբայրն
էր Ռուբէնի որդւոյն՝ Թորոսի, հօրեղբայրը
կ'ըլլայ Թորոսի աղջկան, այն դեռատի Ար-
տային, որ ամուսնացաւ(46) Եղեսիոյ մէջ
Պաղտինի (Baudouin de Bologne) հետ, որ
քիչ ետք երուսաղէմի թագաւոր եղաւ,
եղբօրը՝ Godefroi de Bouillonի մահէն վերջ:

Այս պատմութիւնը ծայրէ ի ծայր յար-
մարցուած է օգտագործելու համար Պեխտ-
Եպիխտ-Խաչատուրի կեանքն ու քաջա-
գործութիւնները, այս իշխանը կապելու
համար գլխաւոր գերակատարներուն հետ
այն մեծ եղելութեանց, որոնք տեղի ու-
նեցան վերին Սուրբիոյ մէջ ժԱ. դարուն
վերջին տարիները և հետեարար Հայոց

(42) Alischan, Léon, p. 12 և Sissouan, p. 87
[= Սիսուան, էջ 86]:

(43) Laurent, Byzance et les Turcs, p. 85:

(44) Alischan, Sissouan, p. 43:

(45) Kirakos, tr. Brosset, p. 54 [= Կիրակոս
Գանձակեցի, Համաօս Պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ 58], Saint-Martin, Mémoires sur l'Arménie, I (1818) p. 388, Dulaurier, Historiens Arméniens des Croisades, I, p. L, de Slane, Historiens Orientaux des Croisades, I, p. XXII:

(46) Dulaurier, Hist. Arm. Croisades, I, p. 41,
Ro. Röricht, Geschichte d. König, Jerusalem,
Hagenmeyer, և Foucher, p. 421 և Էկքեհարդ, c.
VI, 5:

ազգային հպարտութեան գոհացում տալու
համար: Բայց — վասնզի բայց մը կայ —
ժամանակակից աղքարները կը պակսին
այսքան գեղեցիկ վէպի մը իրբւ խարիսխ
ծառայելու համար, վէպ՝ որ այլապէս այն-
քան քիչ համաձայն է այն ճշգրիտ տեղե-
կութեանց, զորս Խաչատուրի մասին տուած
են իր ժամանակակիցները՝ Psellos, Attaliates,
Skylitzes և Bryenne.

Մեր ծանօթութեանց ներկայ վիճակին
մէջ, իմաստութիւնը կը պահանջէ ուրեմն
Անտիոքի գուքս Խաչատուրին մասին վլս-
տակի միայն այն տեղեկութեանց՝ որոնք
հաւաքուած են այս աշխատութեան առա-
ջին մասին մէջ(**)

JOSEPH LAURENT

Թրգմ.

Բարիկ

ՀԱՅԿ ՊէրՊէրեան

(Այս ուստիմասիրութիւնը հրատակուած է Ե-
զանականական Խաչատուրին (1929/30)
մէջ, էջ 405-411):

(**) [E. Honigmann, Die Ostgrenze des byzantinischen Reiches, էջ 120, ժան. II, Khatatouriosի
իր տարրեր մէկ զրչութիւնը կուտայ Կատաтур
և կ'աւելցնէ թէ ևՄ. Ուռայիշինին յիշած Գեխ-
տին (= Vestis) նոյնացումը Խաչատուրին հետ
չի կրնար պաշտպանութիւն և կը յդէ լոռանի այս
ուստիմասիրութեան: Նոյն զիրքին մէջ, էջ 139,
ժան. 7, կը զրէ, «Պեխտը սովորաբար անտեղի-
օրէն կը նոյնացնեն Խաչատուրին հետ: Այս նոյ-
նացման դէմ տե՛ս լոռանի յօդուածը»:

Ասոր հակառակ, Claude Cahen կը զրէ: «[Ան-
տիոքի] գուքսը կը կոչուէ Խաչատուր կամ Պեխտ,
կրկնակ անուն բայց հաւանականաբար միակ անձ
(առաջինը յունական իսկ վերջինը արաբական
և հայկական աղքարներուն մէջ): C. Cahen, «La
Chronique abrégée d'AlcAzimî», Journal Asiatique, Juillet-Septembre 1938, p. 426) (Ե. Թ.):

ԺԱՆՈԹ. —

Սինի Հոկտեմբեր 1951ի թիւին մէջ, էջ 302,
սինակ Ա., երկրորդ հատուած, տող 13, կարգալ
ուոր ալէ ձեռագիրն է» խօսքին մէջ ալէ և յայէ
զիխագործ չեն տպուած», սինակ Բ., առաջին
հատուած, տող 1, կարգալ ուր, փոխանակ որ,
էջ 303, հատ. Բ., վերջընթեր տող, կարգալ ու-
լամայքնոց, էջ 303, տող 12, կարգալ ենեմ, փո-
խանակ լինեմ, տող 33, կարգալ Հարազ Էջենին,
էջ 304, տող 28, կարգալ Մասմասին հետ, ժան.
19, կարգալ ծովակալ փոխանակ ծովովակալ և հայ-
կական փոխանակ օրինական:

ԿՐՈՆԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ՄԱՂԱՔԻԱՅԻ ԳՐՔԻՆ ՇՈՒՐՋ

9) Եւ հիմա, խնդրեցէք Աստուծմէ, որպէսզի գթայ մեր վրայ. ձեզմէ եղաւայս, ձեզ սիրով պիտի ընդունի, կ'ըսէքանակներու Եհովան։

Հեգնական է թօնը կոչին, մարգարէն, մասնակից կը դասէ նաև ինքինքը մեղաւորներու խմբակին։ Ձեզմէ եղաւ այս՝ պարզաբանութիւն (glose) մըն է, բծախընդիր ընթերցողի մը կողմէ ներմուծուած, որ կը գժկամակի մարգարէն յանցապարտներու շարքին նկատելու, նախզգաց երկիւղով մը, թէ չըլլայ ան նաև պատասխանատու գործուած անիրաւութեանց։ Անտարակոյս, վերջին կարծիքը ժխտական պատասխանի մը կը յանզգի, իրենց անկարգութիւններէն եզրակացուած։ Փոխանակ ՆԱ/ LXX ունի ուս թեսն նաև նման նոյնպէս Զօհ. Ղա. Եթովպ. և Արար. Ռունի նոնչոյ ՕԱ ունի ու ծենիութեանց։ Անտարակոյս, Զօհ. Կաշտեցուցէք զնա. ՕՏ կը շարունակէ նա ձեռհաջ նման, նոյնպէս Վուլկ.։ ԱՄՊԻ ՕԱ ունի ԱՇԽԱ նոյնպէս Արար. Ղա. Եթովպ. Զօհ.։

10) Ո՞վ ձեզմէ պիտի գոցէ դռները, որպէսզի չի վառէիք խորանս ի զուր։ Ոչ մէկ հաճոյք կ'առնեմ ձեզմէ, կը յայտարարէ բանակներու Եհովան, և հաճելի չեն ինձ ընծան ձեր ձեռքերուն։

Ղիմ տեղ LXX ունի ծունա այսինքն Ծ և Ճ շփոթուած է։ ՌԱՅՈ ԼXX ՏԱԿՆԵՍԻՇԽՈՆԴԱ։ ՄԻԴԼ Ա.Ք.Ք. dalitu, երկակի (duel) յոգնակին է, տաճարի կրկնակ դռներուն կ'ակնարկուի։ Դասփակումը, պիտի արզիէ իրենց քմահաճային մուտքը սրբավայրէն ներս։ ԸՆՀ՝ ի զուր, կը շեշտաւորէ քահանաներու մեղկութիւնը։ Եհովայի առողջ ըմբռնումը, պայմանաւոր ներքին հոգեկան լիութեամբ, և անեղծ սիրոյ հուրով, իր խրախուսուի մարգարէին կողմէ։ ՇՐԱՌ Վուլկ. ունի incendatիսկ Օ^{ՅԱՀ} ունին այցէտա։ Ասոր. Զօհ. Ղա. Արար. Ճնափաւ։ Ը

շփոթ լի նի Սի և Թէ. ունի ու շրջէա նման այսինքն չօդէա = շրմա էշա՝ պէտք ունիմ։ 11) Որովհետեւ արեւելքէն մինչև արեւմուտք, մեծ է անունս ազգերուն մէջ, և ամենուրեք խունկ կը մատուցուի անուանս և սուրբ նուէր։

Բացայայտ կերպով, այս հատուածը կը յայտնաբերէ, Եհովայի պաշտամունքին տիեզերական հանգամանքը։ Արդ՝ Յուղայի նիւթապաշտ աշխարհակայեցքը խոտոր կը համեմատի, արտասահմանի համասփիւո Հըէաներու կրօնական չերմեռանդութեան և գիտակից նախանձախնդրութեան։ Հոգեկան նոյն տրամադրութիւնը կը խանդագառէ նաև ԻՂԱԾ՝ կոյը, բարբարոսը, հեթանոսը, կռապաշտը, ձերբազատելով զայն բազմաստուածեան լարիւրինթոսէն, պայծառացնելով իր մէջ, միաստուածեան յստակատառութիւնը, որովհետեւ անտչար, բարեպաշտ, և ուղամիտ է իր ընթացքը։ ՆՈԴԱ LXX ծէծէատաւ, նոյնպէս Արար. Եթովպ. Զօհ. ՌԵԿՄ LXX նոյնպէս Զօհ. Ղա. Եթովպ. Նախընտրելի է ՌԵԿՄ՝ մուգթաբը փոխել ՌԵԿՄ միգթաբի՝ խունկ Ա.Ք.Ք. kutrinnu խունկ, Արար. յօ ծխել միաւլ։ Հորիուրա հարութ և մոնակ Եթովպ. կ'աւելցնէ սիմ սուրբ անուանս։

12) Մինչդեռ զուք կը պդծէք զայն, ըսելով։ Տիրոջ սեղանը պղծուած է և անոր ճաշը քամահուլի։

Լքուած, անտեսուած, սրբապղծուած է Տիրոջ սեղանը և անոր զուր։ Յարգանքի պակասը, որոշապէս ուծացուցերէ զիրենք աստուածայինի վայելքէն։ ՆՈՎՈ իրեն կըրկնագրութիւն (diptographie) աւելցուած է։ ԼXX կը շարունակէ ու ու էպութեանուած։ ՕՏ ունի էջունատաւ։

13) Եւ կ'ըսէք։ Նայեցէք։ որքան տաղտուկ. և զիս կ'արհամարհէք. կ'ըսէք բանակներու Եհովան. և կը բերէք զողցըւածը, կաղը և հիւանդը, և կը մատուցանէք զայն իրեն ընծայ. կրնա՞մ զայն ընդունիլ ձեր ձեռքէն կը յայտարարէ բանակներու Եհովան։

Ոչ մէկ երախտագիտական և նուիրումի զգացում. ծանրակշու է արդարեւ, գործադրութիւնը ծիսական կարգին, երբ ան զուրկ է, սրտապնդիչ և կենսաւոր հոգեկան յատակագծէ։ ՄԱՐԹԱ զօդիչ զօդիչ կատարեաւ։

14) Բայց անիծեալ ըլլայ խարեան,
որուն հօտին մէջ արու մը կայ, որ ուխտած
է, և յետոյ վթարեալ մը կը զոհէ Տիրոջ,
որովհետո մեծ թագաւոր մըն եմ ես, կ'ըսէ
բանակներու Եհովան, և իմ անունս, ահա-
ւոր է, ազգերու միջնէ:

9-10110 8.

1) Եւ հիմա, ձեզի այս պատռէրը, ովքահանաներ:

Նկատի ունենալով, նախորդ էջերու պարունակութիւնը, անոնց բարոյական վաշտասեռիչ ախտանիւը, բնականօրէն կը թեւագրուի, ազգաբարութեան մը, պատգամի մը, հրաւերի մը, շինիչ և բաղձալի հրամաշականը. **מצוזה** հրաման, պատգամ, օրէնք, մարդկային ես. XXXVI, 21, աստուածային, Դ.և. IV, 13. յաճախ կը գործածուի հետեւեալ հոմանիշներու հետ. **ՀԿԻՄ**. חקוקות.

2) Եթէ մտիկ չընէք, և եթէ նկատի չառնէք փառք տալ անուանս. — կ'ըսէ բանակներու Եհովան. — պիտի զրկեմ ձեր վրայ անէծքը և պիտի անիծեմ ձեր օրենութիւնը, և արդէն անիծած եմ դայն, որովհետեւ նկատի չէք առներ:

3) Ահաւասիկ, պիտի փշընմ ձեր բազուկը, և ձեր գէմքերուն վլայ աղք պիտի

սիստեմ. — աղբը ձեր տօներուն — և ձեզ
պիտի վերցնէ անոր դէմ:

Պարպուած է այլես, փայլէ և զրաւ-
չութենէ, սրբագան սպասին երկարող բա-
զուկները, օրհնելու և քաւելու իշխանու-
թիւնը զրկուած է իրենց, սովորականա-
ցած, գոենկանացած են. տաճարը իրենց
պաշտօնատեղին ըլլալէ դադրած է. **רַעֲגָן**
փոխել **עַדְגָּה**: **הַזְּרוּ** **הַזְּרוּ** **אַלְפָרָוֹא**
բազուկ նոյն արմատ. Արար. Ձրաց, Աքք.
ze'eu b'rəvəq. zare'e, Ասոր. **אֶת**. LXX ὄποιον
վուլ. brachium. Արար. **աջ** բազուկ **الجني**
Ասոր. **אֶת** 1. Ասոր. **מִצְדָּל** **עַל** **կְּסֵנִית**
פְּרָשׁ: **חֲגִיכָם** **אַלְפָרָוֹא**, **աղտոտութիւն**, **կղկը-**
ղանք Ասոր. **אֶת** **וְנַשְׁא אַתְכָם אַלְיוֹ**: **տար-**
տամ է նախագտառութիւնը, շատ յատակ և
սկզբնատ ոք ըլլալ կը թուի Ասորերէն
թարգմանո 'իւնը, **אַתְּ** **מַעֲמָד** **ձեզ** **ա-**
նոր հետ պիտ. **վերցնեմ**, **זֶה** **ցրուել**, **ուլփ-**
ռել, Արար. Ձրի, Ասոր. **אֶת**:

4) Եւ պիտի զիտնաք, թէ ես զրկած
եմ ձեզի այս օրէնքը, տեսնելով թէ ուխտ
Դևիին հետ էր, կ'ըսէ բանակներու Եհովան

Ղեկին կը խորհրդանշէ քահանայական
դասը, Օթինազանց է գտնուած, ճղճիմ և
փոքրոզի հաշիւներով նսեմացած, գահա-
վիժած է իր վաղեմի վեհութենէն. ԿՇ ՌԱ
նոյնապէս Ասոր. և Վուլկ' խոկ LXX ործ
տօն լեսւաչ նոյնապէս Զօհր. Ղա. Եթովպ.
Արար. ՅԴ զիտնալ Աքքա. իւս Հնդկեւրո-
պական լեզուախումբին հետ ունի նաև
հանգիտութիւններ այսքայը, ինչպէս Սանս-
կրիտերէն վէտա, Զենտերէն վայտա, Յն.
օնձա, Գերմ. wissen, Հայ. զիտնալ, Առալ.

5) Ուստու իր հետն էր : Կեանք և բարօրութիւն , և զանոնք կը չնորհէի իրեն , վախ , և կը վախնար ինձմէ , և անուանս ի դիմաց , երկիւղով կը համակուէր :

Կեանք, վայելք, հարստութիւն, փառք՝
պայմանաւորուած են լոկ Եհովայի հանդէպ
ունեցած մեր երկիւղով, որովհետեւ երկիւղ
Տեսոն, է սկիզբն իմաստութեան: Ակզգ-
նական ըջանին, Ղեխական նուրիբապետու-
թիւնը մենաշնորհուեցաւ բացառաբար, որը
իր կարգին երկիւղի և պատկառանքի իր
տուրքը ընծայեց անոր անուան: Այս կեանք
հիշ ապրիլ բայարմատէն, Արաբ: Վ Ասոր-
էս Եգիպտերէն անխ, Ղամտերէն օնխ:
Դօլշ առողջութիւն, բարօրութիւն, բար-

գաւաճում ծագումը սումերական է salam,
որ կը սեմականայ Աքքատերէնով salamu
ձեին տակ, Արար. גָּלַם, Արամերէն שְׁלָמָם
Ասոր. ܫଲାମ, bəθu'l. salame וְאֶתְנֵם לוֹ LXX
ունի եղակի ու հօռակա աւտ նոյնպէս Արար.
Զօհր. Ղազ. Վաւլ. և Թարկ. :

6) Ճշմարտութեան օրէնքը իր բերանն էր, և անիրաւութիւնը չէր գտնուէր իր շրթներուն վրայ: Խաղաղութեան և ուղղութեան մէջ կը քալէր իր հետ Շատեր գարձուց ան անօրէնութենէ:

7) Որովհետև քահանային չըթունքները
պիտի գանձեն գիտութիւն, և կրթութիւն
պիտի փնտռեն իր բերնէն, որովհետև բա-
նակներու Եհովային պատգամաբերն է ան-

Բահանայական կոչման ուղեգիծը կը
մանրամասնուի : Իր գիտութիւնը, փորձա-
ռութենէ քաղուած շաղկապեալ ամբողջու-
թիւն մըն է՝ իրողութիւնները դատելու ու-
րոյն տեսակէտ մը : Ան է Տիրոջ պատգա-
մաբերը, միջնորդը աստուածայինին և
մարզկայինին միջն, կանչուած պատաս-
խանատու պաշտօնի մը, ՂԱԼ հրեշտակ,
պատգամաբեր . Ասոր. Խլամ Արաբ . Ալակ,
Եթովպ. male'ake.

8) Բայց դուք չեղեցաք ճամբէն։ Շա-
տեր սայթաքեցուցիք վասն կրթութեան,
եղծանեցիք Դեկի ուխտը, կ'ըսէ բանակ-
ներու Եհովան։

Հակապատկերը անողոք իրականութեան, աննախապաշար հասկացողութեան արահետէն, փոխեց իր ուղղութիւնը քահանան. թերահաւատ իր սիրտը, գայթակղութեան քար հանդիսացաւ զինքը չըլապատող հասարակութեան, խղուած է դա-

չինքը, վերջակէտելով փայփայուած յոյ-
սերու և ակնկալութիւններու անրջային
թօվչութիւնը։ Դր մն հճր յետոյ Եթովպա·
կ'աւելցնէ իր։ **הכשלהת** էն առաջ ոչ կ'ա-
ւելցնեն LXX, θορ. θ.պ. Եթովպա. և Թար-
զում։ **דרך**, Արար. Երկու. طریق, Աքքտ. durgu·
կ Արար. տկարանալ, սայթաքիլ,
Կ Արար. բայլ կիֆիլ գործածուած է·
գայթակղիլ բայլ կիֆիլ գործածուած է·
լոր բառացիօրէն կը նշանակէ միացում
լոր բայէն որ կը նշանակէ ծալլել, բոլո-
րել, ոլորել, Արար. لی չուտան ոլորել:

9) Եւ ես անարդ և գձուձ դարձուցի
ձեզ բոլոր ժողովուրդին դիմաց, քանի որ
չէք պահեք ուղիներս, այլ կողմակցու-
թիւն կը ցուցնէք պատճամին միջոցաւ:

Արդարադատ, անաչար է Եհովան, իսկ շահախնդիր, կաշառակեր, ճղճիմ նըկատումներով զսպանակուած մեքենականութիւն մըն է դարձած կղերը, ներքին հըմայաթափութիւն, ստորին և պժգալի դիրքմը կը գրաւէ անընկերութեան մէջ։ լվար. յա Ասոր. Աղջ, Աքք. sapalu, խոսնարկիլ, ցածնալ, ընկճուիլ։ **לכל העם** גוּפְנָאַקְהִי թարգմանուած է, LXXի, Վուկաթայի և Թարգումի մէջ։ **דרבי** ուղիներս, այս հատուածին մէջ փոխարերաբար գործածուած է, խրատ, պատուիրան, պատուէր իմաստով։

10) Միթէ բոլորս մէկ Հայր չունի՞նք,
արդեօք մէկ Աստուած մը մեզ ստեղծած
չէ՞, ինչո՞ւ կը խարենք զիրար, պղծելով
մեր հայրերու ուխտը:

Ազգային համերաշխութիւնը պառակտուածէ է նենգամիտ տրամադրութիւններու մեղսակցութեամբ։ Նախահայրերու կտակած աւանդական հաւատարմութիւնը եղած անուածէ, իր էական սկզբունքներուն

մէջ։ Եհովայի գորովագութ հայրութեան
խորունկ զիտակցութիւնը միայն պիտի սա-
տարէ բաղձալի անշահախնդիր ոզիի ուռ-
ճացման։ Փոխանակ լեցունի լ LXX ունի ոչու-
նական նոյնապէս Զօհր։ Ասոր. Եթովպ. Արար.։
Փոխանակ բրանո Զօհր. ունի նոյն-
ապէս Արար. և Եթովպ.։ Փոխանակ նեղա-
LXX ունի նոյնապէս Զօհր. Ղպ. Եթովպ. Արար.։ אָבִ հայր, Արար. Օ, Ա-
սոր. Խ, Աքքա. abu. כָּל Արար. ק, Ա-
սոր. ﮱ, Եթովպ. kile, Աքքա. kalu. לְאָ
Աստուած, Աքքատ. իս որուն սումերական
նախատիպն է dingir, Արար. אָל, מִ, Ասոր.
լְאָ

11) Յուղան նենգեց, գարշանք մը
զործուեցաւ Երուսաղէմ. որովհետև Յուղա
պղծած է Եհովայի սրբարանը զոր կը սի-
րէք. ամուսնացած է ան, օտար Աստուծոյ
մը աղջկան հետ:

Հեթանոսական զեղիս բարքերու ջերմ
փարումը անջատում յառաջ բերաւ, իսրա-
յէլի և իր սրբութիւն սրբոց խորհրդանիշ
եղող ասամարին մէջ, իր մեղապարտ վի-
ճակը սրբապղծեց անոր վեհաշուք հըրա-
պոյրը։ Այլասեռիչ միութիւններու հետե-
ւանքով, հեթանոս աստուածներու տիրա-
պետութիւնը չեղոքացուց ենօվայի հանդէպ
տածուած խանգաղատանքը։ **רָכֶך** בְּתַאֲלִילָעַ וּבְתַאֲלִילָעַ LXX πονή ἐπετήδευσεν εἰς θεοὺς ἀλλοτρίους,
նոյնպէս Զօհը. Ղա. Եթովզա. Արար. Ա-
սոր. Ակ. Սի. և Թէ. կը վերարտազրեն
Երրայական բնագիրը. Ակ. և Շշչէ տὴν
Յոյշտէրա Յոյս առηլլոտրιամենոս. Սի. և Շշչէ
տὴն Յոյշտէրա Յոյս առալլոտրիամենոս. Թէ. և Էլանէ
տὴն Յոյշտէրա յի Հենու. **שְׁדָך** Արար. Ա-
սոր. Խաչ, Աքք. quddusu. **רְכֵב** օտար,
Աքքա. nakru թշնամի, Աս. Խաչ օտար,
Ար. և ի ճաննաւ, Եթովզա. 'ahukara.

ԱՆԴՐԻԱՆԻ ԱԲԴ ԶԵՂԱԿԱՆ

(Եարնեալիկիի)

ՊԱՏՄԱԿԵՆ

ԵՆԻՇԵ ՊԱՏՄԱԳԻՐ

ԵԿ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Փ. Դ.

Պատերազմին վերջ Յազկիերտքային ընթացքը . — Բակ գօրավարին հաջաղործութիւնը . — Առորմիզդ մարզպանին գործունեութիւնը . — Վասակին դատավարութիւնը . — Հայ նախարարեներուն եւ Հայ եկեղեցականներուն Տիգրոսի մէջ դատավարութիւնը . — Անոնց ախորը եւ Հայ եկեղեցականներուն նահատակութիւնը . — Եղբակացութիւն :

Մուշկան՝ Նիւսալաւուրտ, Պարսից բանակին ընդհանուր հրամանատարը, Աւարայրի Ճակատամարտէն վերջ, մասնաւոր տեղեկագրով մը պատերազմին արդիւնքը իմացուց Յազկերտ արքան, երբ տեղեկացաւ պատերազմին մէջ եղած իրադարձութիւնները և երկու կողմանց կորուստները, ի խոր խոցեցաւ, երբ լսեց «Հաւ արանց» զօրավարներուն անունները, ի մասնաւորի երբ լսեց Քաջն Վարդան Մամիկոնեանի մահը շատ ցաւեցաւ «յահաւոր սուր ընկզմեալ խոռվէր» (Փար. 73):

Է. Եկեղանակին մէջ ուշադրութեան արժանի է, Պարսիկներու կողմէն պաշարուած բերգի մը յուսահատ վիճակը: Բակ անունով Հայ քաջամարտիկ և անվեհեր զօրավար մը, զիշերը, իր եօթը հարիւր քաջերով կը յաջողի բերգէն փախչիլ և առզատուիլ իրեն զօրքերովը հանդերձ: Իսկ ուրիշ վայրերու մէջ, ժողովուրդը երկիւղի և յուսահատութեան մէջ կը տուայտէր: Առով հանդերձ, Հայ ժողովուրդը այս մեծ տագնապին մէջ իրեն կրօնական և բարոյական կորովը պահեց: Եղիշէ այսպէս կ'ըսէ անոնց մասին ռԱսպամու էին նոցա մրմունք երգոց, և ընթերցուածք սուրը զրոց կատարեալ ուրախութիւնք: Ամէն ոք, իր մէջ կը զգար նուիրուելու զոհողութիւնը:

Պամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն քահանայ. մարմինք իւրաքանչիւր սուրը սեղան, և ոգիք նոցունց պատարագ ընդունելին: Հայոց զօրքերուն գալով, բոլորն ալ ցրուեցան ասդին անդին: Ոմանք Խաղաքան գաւառը, ոմանք՝ Տմորեաց գաւառը, ոմանք՝ Արցախի անմատոյց և ժժուարամուտ կիրճերուն, ամրոցներուն և բերգերուն մէջ ամբացան:

Յազկերտ հրաման արձակեց և Մուշկան Նիւսալաւուրտը իր բանակովը միասին երկիր վերադառնալ հրամայեց: Յազկերտ արքան, Միհրներսեհի խորհուրդով, Հայաստանի մարզպանութիւնը Ատրորմիզդ անունով մէկու մը յանձնեց, յիշեալին տոհմանունը չէ յիշուած: Յազկերտ արքան, իր տուած հրովարտակովը, նոր նշանակուած մարզպանին կարի զգուշութիւն կը յանձնարարէր, որպէսզի՝ բոլորը սիրով նըւաճեր և քրիստոնէութեան կրօնքին վերըստին ազատ պաշտուիլը կը հրամայէր զգպաշտօն քրիստոնէութեանն համարձակապէս ունել ամենեցունու:

Յազկերտ արքային հրովարտակին համաձայն, Ատրորմիզդ նոր մարզպանը Պարսկա-Հայաստանի ամէն կողմերը խաղաղութեան համար թուղթեր և շրջարերականներ զրեց, որոնց մէջ ասդին անդին ցրուած փախստականները իրենց տունները վերադառնալ հրամայեց, աւետելով իրենց թէյետ այնու բոլորն ալ պիտի կրնային քրիստոնէութիւնը պաշտել ամէն տեղ: Յազկերտ արքայէն առած հրամանին համաձայն, փախստական և ապստամբ Հայ նախարարներուն մասնաւոր թուղթեր զրեց, որոնք անմատոյց բերգերու և բարձրութիւններու վրայ ամբացած կը մնային: Բոլորին վստահութիւն և յոյս կուտար երգմամբ, թէ՝ «զմարզիկն Հայոց չընդուսուցանել, այլ սիրով նուաճել, և զգաշտօն քրիստոնէութեանն համարձակապէս ունել ամենեցուն» (Փար. 73):

Ատրորմիզդ մարզպան Հայ նախարարները զէպի արքունիք զրկեց հոն դատուելու համար:

Այդ իշխաններն ու նախարարներն էին:

1. Միհրապան Արծունի:

2. Խելան Ամառունի:

3. Արշակ Արշարունի:

4. Նման Անձեւացի:

5. Փափազ Առաւելիքան .
6. Վեհի Տաշրազի .
7. Ապրում Արձունիք .

և ուրիշ իշխաններ և նախարարներ :

Բաց աստի , ապստամբութեան մասնակից եկեղեցականները ձերքակալուեցան և արքունիք զբկուեցան :

1. Յովենի կարադիկոս .
2. Գեւնդ Երեց Վանանդեցի .
3. Սամուել Երեց .
4. Արքանամ Երեց Արածացի .
5. Սահակ Խաչիկ Ռէսունեաց .
6. Մուշ Երեց Աղքակեցի .
7. Արեհի Երեց Եղեգեցի .
8. Քաջազ Մարկ Ռէսունեի :

Արքունիք կանչուեցաւ նաև Սիւնեաց տէրն Վասակի իշխանը , պաշտպանելու համար ինք գինքը :

Կալանաւոր նախարարները և եկեղեցականները արքունիք համնելով . Միհրներսեհի կողմէն հարցաքննուեցան : Յազեկերտ փափաք յայտնեց որ բոլորը իրեն ներկայանան : Մեծ առեանին ներկայ եղան բոլոր Արքիք և Անարիք , Պարսիկ աւագանին , ժողերը և Պարսից զենին առաջնորդները : Յազեկերտ անձամբ հարցաքննեց նախարարները և անոնց բերնէն ուղղեց հասկնալ թէ՝ ինչո՞ւ համար համարձակած էին ապստամբիլիլ իր իշխանութեան դէմ : Ամբաստանեալ բոլոր նախարարներն ալ լուցին : Յազեկերտ կրկնեց իր հարցումը : Ասոր վրայ Յազեկերտէն խնդրեցին որ հրաման տայ իրենց նշանակել մէկը որ պատասխան տայ անոր իրենց կողմէն : Արշաւիր կամսարական իր կողմէն խօսեցաւ իր ջատագովական պաշտպանութիւնը համարձակութեամբ եռանդով և ներդաշնակի իր ջատագովականին մէջ , Արշաւիր կամսարական ցոյց կուտայ գրուած նամակներուն պատճէնները և Աւր գրեալք և կնքեալք ի միջի են , որպէս ձեր արդարութիւնդ խնդրէ , աւելորդ բանից և չատիսոսութեան պէտք անդ ոչ են :

Առեանը Վասակ Սիւնին պատասխանատու նկատեց և զայն գատապարտեց , պատիւէն և աստիճանի փառքերէն զրկեց զայն : Վասնզի՝ Վասակ , Սիւնեաց աշխարհին տանուտէրութիւնը ստանալու համար , իր Վազինակ հօրեղբայրը նենգութեամբ և

խորամանկութեամբ սպաննել տուած էր : Եղիշէի համաձայն , Վասակ Սիւնին ի տեսայս կացութեան , կը լոէ . կը պապանձի և Պապանձեցաւ ամեննին , և չզտաւ բան հշմարտութեան ի բերան նորաւ : Եղիշէն դժոխք կ'իջեցնէ զայն : Նոյնիսկ անոր զերկը մանին տեղն ալ յայտնի չըլլար , վասն զի , ան , ըստ եղիշէին հիրեւ զշուն մեռաւ և իրրեւ զգէշ քարչեցաւ : Արդէն , Եղիշէն իր այս Ողբերգութեան զիրքը կը զրէ պատասխան նորա (Վասակին) առ ի կշտամբութիւն յանդիմանութիւն մեղաց նորա . զի ամենայն որ զայս լուեալ գիտասցէ նզովս ի հետ արկցէ , և մի՛ լիցի ցանկացող մեղաց նորաւ : Ահա , այսպիսի ստորին վախճան մը ունեցած էր Վասակ Սիւնին , որ՝ Հայոց աշխարհին թագաւոր ըլլար կ'ուզէր : Եւ Եղիշէ , անէծք կարգալով Վասակի ուեաթոյր յիշատակին կը վերջացնէ իր զիւցազներգութիւն - պատմութիւնը : Վասակին զատապարտութենէն վերջը , Սիւնեաց տանուտէրութիւնը յանձնուեցաւ իր փեսին Վարագվանի , որ Պարակաստան վախսած էր և Միհրներսեհի հետ մտերմացած ըլլարով Պարսկական գենը ընդունած էր և հոն իր աներէն հալածական վախսստական կ'ապրէր : Փարպեցիին համաձայն , զատուելու համար Տիգբոն գացող յանցապարտ նախարարներուն թիւը 31 գրուած է , իսկ ըստ Եղիշէի անոնց թիւ 35 է (ի . Յեղ.) : Անոնց անուններն ալ մի առ մի յիշուած են : Սիւնեաց տոհմէն 2 հոգի՝ Բարգէն և Բակուր եղբայրներ . Արծրունեաց տոհմէն 7 հոգի՝ Ներշապուհ , Շաւասպ , Շնգին , Մեհրուժան , Պարգև , Տաճատ , և Ապրսամ . Մամիկոննեանց տոհմէն 4 հոգի , Համազապեան , Համազասպ , Արտաւազդ և Մուշեղ . Կամսարական տոհմէն 5 հոգի , Արշաւիր , Թաթուլ , Վարձ , Ներսէն և Աշոտ . Ամատունեաց տոհմէն 3 հոգի՝ Վահան , Առանձար և Առնակ . Դիմաքսեանց տոհմէն 2 հոգի՝ Թաթուլ և Մագոյ և 2 ուրիշներ և որոնց անունները չեն յիշուած . Անձեացեաց տոհմէն 3 հոգի՝ Շմաւոն , Զուարէն և Առաւան . Առաւեղեանց տոհմէն 3 հոգի՝ Փափագ , Վարազգէն և Դատ . Մանդակունեաց տոհմէն 2 հոգի՝ Առակ և Փարսման . Ռոփսեանց տոհմէն 2 հոգի՝ Բարիկ և Յոհան . Ռշտունեաց տոհմէն Վըէն , Գընունեաց տոհմէն Ատոմ:

Եղիշէն 35 անուններ կը յիշէ, ըստ զիրք յիշուած անուններուն, իսկ Փարպեշին 31 անուններ կը յիշատակէ, Փարպեշին մէջ հետեւել 4 անունները չեն յիշուած, 1. Մեհրուժան Արծրունի, 2. Ներսեհ Կամսարական, 3. Աշոտ Կամսարական և 4. Զուարէն Անձնացի:

Եթէ երբեք Դիմաքսիանց տոհմէն առանց անունի յիշուած երկու հօգիններն ալ թիւի տակ անցնենք, Տիզրոն գացող Հայ նախարարներուն թիւը 37 կ'ըլլայ: Տիզրոն գացող Հայ նախարարներէն շատերը Աւարայրի ճակատամարտին մասնակցողներէն էին. Տիզրոն գացող Հայ նախարարները, Եղիշէի վկայութեամբ ամենեքին սոքակամօք մատնեցան ի սուրբ Կապանս չարչարանացն (Ը. Յեղ. էջ 378): Տիզրոն գացող Հայ նախարարներուն հետ, քանի մը նախարարազուն տղաքներ ալ, իրբեպատանդ Պարսկաստան զրկուեցան, անոնցմէ յանուանէ կը յիշուին նահատակ Հմայեակ Մամիկոննեանի զաւակները, Վահան, Վասակ և Արտաշէս (Փար. 111), Արշաւիր Կամսարականի զաւակները, Ներսեհ և Հրահատ և ուրիշներ (Փար. 112):

Փարպեցին և Եղիշէն Տիզրոնի մէջ տեղի ունեցած զատական գործողութիւնները ընդարձակօրէն պատմած են, սակայն և այնպէս կէտ առ կէտ իրարու չեն համապատասխաններ, Միհրներսեհ հազարապետի վերջոյ մըրկելով և զայրանալով իր թօյնը և մաղձը թափեց հրամայելով որ երանելիները զղթաներով ծեծեն, և ապա հրամայեց որ զղթայեակապ բանտարկուին մինչև որ անոնց մասին արքունական վճիռ մը արձակուի: Եկեղեցականներէն վերջ, նախարարներն ալ թուով 37 խիստ քննութեան և գատավարութեան ենթարկուեցան: Միհրներսեհ անձամբ վարեց զատավարութիւնը իրբեք ըմբուտ և արքունի հրովարտակները անարգողներ: Վասակի զատավարութենէն վերջ, 8 եկեղեցականները և 37 նախարարները Վարկան աքսորուեցան, այժմու Մազանդարան զաւառը, կապանքով և հըսկողութեան ենթարկուելով: Եկեղեցականներուն և նախարարներուն աքսորը տեղի ունեցաւ 452 տարւոյ սկիզբները և անոնց բանտարկութիւնը տեղ 2 տարի, մինչև 454 տարւոյ ամսուը:

Ը. Յեղանակը, որ ըստ ինքեան յաւելուած մը կ'երեւի Եղիշէի միւս հօթը Յեղանակներուն, ամենէն ընդարձակն է, նիւթը հետաքրքրական է և երեք մասերու կը բաժնուի: Այստեղ, մոգութեան կամ Մազգեղական դենին հինգ կէտերուն անունները կան յիշատակուած: Ա. Համակեցնը, պարսից կրօնքը ամբողջութեամբ զիտցողը, հմուտն է: Բ. Ամբարտաքաշը, կրօնական խնդիրներով զրազողը: Գ. Բոզպայիտը, զիրք մըն է Պարսից մոգերուն կրօնքին յատուկ: Իսկ Գ. և Ե. Պահաւուիկ և Պարսկագղին, Պարսից Օրէնքը և Պարսից կրօնական պաշտամունքին զիրքը: Իսկ ասոնցմէ վերջը կուգար Մազպետը: Յազկերտ իր թագաւորութեան 16րդ տարին, երբ Քուշանաց դէմ պատերազմելու կ'երթար, Վրկաննէն անցած ատեն, հրամայեց որ բանտարկեալ եկեղեցականները իր ետեէն բերեն, ապա՝ բոլորը մէկ Ապարայժմու Խորասան զաւառէն տարուելով Նիւշապուհերդիին մէջ պահուեցան: Դատապարտեալ 8 եկեղեցականներէն երկու հօգի, որոնք Արտաշատի ատրուշանը աւերոզներն էին, Սամուէլ երէց և Արրահամ Սարկաւագ, անոնցմէ զատեցին և բանակին հետմիասին տարին: Քուշանաց Պատերազմը անյաջող անցաւ, Յազկերտ խիստ ազդըւ և ցեցաւ այս ձախորդութենէն և մոգերը կը մեղադրէր թէ, արժանապէս չէին պաշտած աստուածները: Միհրներսեհ խորհրդակցութեամբ մոգերուն, Յազկերտին յայտնեց թէ, իրոք աստուածները բարկացած են իրենց, վասնզի՝ զեռ կենդանի կը պահէ անոնք՝ որ աստուածները սպաննելու ելածէին: Յազկերտ արքան հրամայեց զիխատել բանակին մէջ գտնուողները, իսկ Նիւշապուհ բերդին մէջ գտնուողներուն համարաւէ, մասնաւոր դատաւոր նշանակուեցաւ Դինշապուհ, իրեն օգնական տրուեցաւ Զնիկան մարզպետը և Մովան հանդերձապետը: Եկեղեցականներուն վրայ իրբեք վերահսկիչ զրուած Մոզպետը քրիստոնեայ գարձաւ ի մէծ գայթակղութիւն Պարսից:

Դինշապուհի գլխաւորութեամբ 6 եկեղեցականներն ալ չարաչար տանջանքներով նահատակուեցան, Յազկերտի թագաւորութեան 16րդ տարին, 454ին Հրոտից ամսուան 25ին: Նահատակները որ Ղեղնդեանց անոնցմ ծանօթ են հետեւալներն են.

1. Խօսունեաց Սահակի եպիսկոպոս .
2. Հոգայմեջի (Վայոց Զար) Յօվաէփի կարողիլոս .
3. Դեմոնք երեց , Վանանդիզի .
4. Մուտէ երեց , Աղբակեցի .
5. Արենք երեց , Բագրեևանդացի .
6. Քաջաշ Սարկաւազ :

Խուժաստանցի խուժիկ էը որ դաշտոնի քրիստոնեայ եղած էր Արքոց մասունքները կը բերէ սկա երկրորդեաց մեղ զամենայն կարգւու : Խուժիկին տուած մանրամասն վկայութեանց և տեղեկութեանց վրայ եղիչն Բ. Յեղանակին առջնի մասը յօրինածէ «Ֆարձեալ վասն նորին պատերազմի և չարչարանաց սուրբ քահանայիցն» :

Բ. Յեղանակին մէջ կը յիշուին նաեւ իորէն և Արքահամ խոստովանող , այս երկոնքը Ասորեստան աքսորուեցան , արքունական մշակութիւն կատարելու համար երկուքն ալ տեսակ տեսակ և դառն չարչարանքներու ենթարկուեցան , Խորէն վախճանեցաւ , կլիմային և նեղութեանց չկըրնալով դիմանալ «Վասնզի՝ յոյժ խոստագոյնս պահէին ի ջերմոջ աշխարհին , և անդադար էին ի ճանապարհորդութեանն ընդ նոյն Շահուղ . ընդ Մեշովի և ընդ Քաշկար և ընդ ամենայն Ասորեստան և Խուժաստան , սաստիկ տապով հարեալ , ի խորչակէ մեռանէր սուրբն Խորէն , և աւանդեալ լինէր , ի բնակչաց աշխարհին ընդ սուրբ վկայուն : Խակ 12 տարիներ վերջ , Արքահամ հայրենիք վերադարձաւ և եկն եմուտ յաշխարհն Հայոց : Բ. Յեղանակին վերջին մասին մէջ , եղիչն , աքսորուած նախարարներու մասին կը խօսի , որ 9 տարի և 6 ամիս կը տեէ անոնց աքսորը : Յազկերտ արքային մահը վրայ կը հասնի , իր թագաւորութեան 19րդ տարին : Յազկերտ արքային երկու որդիները , իրենց հօր գահը ժառանգելու համար , սկսան իրարու հետ պատերազմիլ որ 2 տարի տեսած է : Այս խոկ պատճառաւ , բանտարկուած և աքսորուած նախարարներուն ազատ արձակուիլը ուշացաւ : Պերոզ իր հօրը Յազկերտին յաջորդեց : Աքսորուած նախարարներէն ոմանք Պերոզ արքային թագաւորութեան 5րդ տարին արձակուեցան և պատուեցան , ասոնց մասին եղիչն կ'ըսէ Քայլ ի տեղի այսր դարձեալ գալ պիտիւ : Բաց աստի , եղիչն նախարարներէն մօտ 500-ին , յականէ անուանէ ճանչցած ըլլալը կը յիշատակէ «Զի հինգ հարիւրով չափ յաշ յանէ յանուանէ ճանչչեմ , ոչ որ միայն

աւագագոյնքն էին , այլ զբագումս ի կըրտսերագունաց անտաի » (Բ. Յեղ.) :

Հայոց աշխարհին փափկատուն տիկինները զարմանալի համբերութիւն և կորով ցոյց տուած են , ինչպէս կը զրէ Եղիչն և Տիկինայք փափկատունք Հայոց աշխարհին , որ զրգեալք և գոռուեալք էին յիւրաքանչիւր բաստեռունս և ի գահաւորակս , հանապազ բոկ և հետի երթային ի տունս ազօթից , անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք՝ զի համբերել կարասցեն մեծինեղութեանն : Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց ամճովք էրէոց , խոտաբուտ կենօք իրբւ զգայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդրութեամբ , և ոչ յիշէին ամենեին զսովորական փափկութիւնն : Աւացեալ ներկան մորթք մարմնոյնոցա , վասնզի ցերեկ արեակէզք էին և զամենայն զիշերսն գետնաբեկք : Սազմոնք էին մշտնջենաւորք՝ մրմունջք ի բերանս նոցա , և միիթարութիւնք կատարեալք ընթերցուածք մարդարէիցն» :

Հայաստանի խոստաշունչ ճմեռները իւրաբու կը յաջորդեն , կուգայ գարունը , սակայն իրենց սիրելիները կ'ուշանան «Բազում ձմերաց հալեցան սառնամոնիք , եհաս գտրուն և եկին նորեկ ծիծեռունք . տեսին և խնդային կենցաղասէր մարդիկ , և նոքանչ երբեք կարացին տեսանել զանձկալին իւրեանց : Ծաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա , և աչօք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա : Սպառեցան բարակք որսականք , և խցեալ կուրացան արշաւանք որսորդգաց : Բնագրօք յիշատակեցան նոքա , և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսս ի հեռաստանէ . ի ճաշակատեղս նոցա հայեցան և արտասուեցին , և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա , բազում արձանք կանգնեալ էին յանուննոցա , և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա» (Բ. Յեղ.) : Պատմութեան շարունակութիւնը կը մնայ անաւարտ , երբ կ'ըսէ Եղիչն Քայլ ի տեղի այսր ինձ գարձեալ գալ պիտիւ : Հակառակ իր խոստմանը , Եղիչն զանց ըրած է յիշատակել , աքսորուած նախարարներուն վերադարձը , որ Պերոզ արքային 6րդ տարին , 462-ին տեղի ունեցաւ : Աքսորուած նախարարներուն թիւը տուինք , ըստ արքունական հրամանին ,

անոնք բոլորն ալ իրենց ստացուած քնները ստացան և տանուտէրութիւնը վարել ըստ հայրնթացի:

Արդեօք կարելի՞ չէ, ներքին փաստ կամ ապացոյց նկատել, եղիշեն լոռութիւնը աքսորեալ նախարարներուն վերադարձին աքսորեալ նախարարներուն իր գրքին մէջ, եղիշեն զրութեան թուականը ճշգելու համար, որ է 432էն առաջ գրուած նկատել իր պատմութիւն-դիւցազներգութիւնը: Բաց աստի, եղիշեն իր առջեւ ունի ուրիշ աղքիւրներ, ոմանք մեզի անծանօթ, որոնցմէ լիսէլի կ'օգտուի իր պատմութիւն-դիւցազներգութիւնը, իր «Ոսկեմատեան»ը գրելու ատեն . . .

* * *

Վարդանանց Պատերազմը (451), որուն՝ 1500-ամեայ Յորելեանին առթիւ, 1951 տարին Յորելլինական Տարի հոչակուած է, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գէորգ Զ. Վեհափառ Հայրապետական սրբատառ կոնդակովը, իրը և Աւարայրի հերոսական ճակատամարտի և Դեւնդեանց նահատակութեան 1500-ամեակի համագային-եկեղեցական տօնա, Հայոց ազգային և կրօնական պատմութեան մէջ մեր առաջին կրօնական և ազգային մեծ պատերազմը եղած էր ընդգէմ Պարսից Տէրութեան, իսկ երկրորդ կրօնական և ազգային մեծ պատերազմը եղած էր, Վահանեանց պատերազմը ընդգէմ Պարսից տէրութեան, որ նուիրագործուեցաւ Նըւարսակի գաշնագրովը (484-ին): Երկու մեծ պատերազմներուն մէջն ալ, Մամիկոնեանց տոհմին քաջածնունդ զօրավարներուն վիճակեցան պատերազմները զեկավարել: Մամիկոնեանները, մեր ազատատենջ ժողովուրդին ամենէն իմաստուն, ամենէն հանճարեղ և ամենէն ասպետական ու հերոսածին զօրավարներն ու զինուորականներն եղան, որոնք՝ սուր և խաչ ի ձեռին կուեցան և պատերազմեցան Պարսիկներուն դէմ յանուն ազատութեան, յանուն հայրենիքի և յանուն Ս. Եկեղեցւոյ փըրկութեան, պաշտպանութեան և ազատազրութեան: Մամիկոնեան տոհմի զօրավարներուն և զինուորականներուն նշանաբանը

եղաւ, ազդ, հայրենիք և կրօնք և այս երեք սրբութիւններու համար անոնք պատերազմեցան, նահատակութեցան և անմահացան Հայոց կրօնա-ազգային պատմութեան մէջ:

Բառքալ, Ֆրանսացի մեծ և հանճարեղ իմաստասէր փիլիսոփան ըսած է «L'homme passe infiniment l'homme», «Մարդը անհունօրէն կը գերազանցէ զմարդ»: Արդարն, մարդուն մէջ մարդէն աւելի բան մը կայ:

Վարդանանք և Դեռնդեանք, անհունօրէն գերազանցեցին և գերակշանեցին իրենք զիրենք: Մարդը, միշտ և շարունակ աւելի և ինքնիրմէն: Ան՝ բան մը աւելի կ'ընէ: Ան՝ աւելիին կը ցանկայ, աւելիով կը կատարէ և աւելիով վերջ կուտայ իր կեանքին: Եւ այդ աւելին, մարդուն ներաշխարհին մէջ վեր բարձրանալու, վեր կենալու, աւելին ընելու և կատարելու և աւելին ըլլալու ցանկութիւննու փափաքնէ:

Վարդանանք և Դեռնդեանք աւելին ըրին, աւելիով կուտեցան և պատերազմեցան և աւելիով նահատակուեցան և վերջապէս աւելիով հերօսացան, սուրբեր, հերոսներ և քաջեր եղան իրենց քաջածնունդ ժողովուրդին պէս: Վարդանանց Պատերազմին պատմութիւնը, պարզ և սովորական պատերազմի մը պատմութիւնը չէ ինքնին, այլ՝ հերօսութեան, սրբութեան և հանճարեղ առաջնութիւննու իրենք զիրենք գերազանցելու և այլակերպելու պատմութիւննէ: Անոնք՝ լուսածնունդ և հանճարեղ ժողովուրդի մը, ափիւծափրտ, անըներ ու քաջակորպ զօրավարները և զինուորականներն եղան, որոնք Աւարայրի Պատերազմին մէջ ինկան ու նահատակութեան քաջարար և հերօսաբար . . .

Վարդանանց և Դեռնդեանց փառքը և անոնց խնկանուէր և սուրբ յիշատակը, բազմաթիւ զարերէ ի վեր վառ կը մնայ բովանդակ Հայութեան մէջ, և այս տարի հայրապետական բարձրագոյն հրամանով և մանաւոր կարգադրութեամբ կը տօնենք Անոնց՝ Աւարայրի Պատերազմին, Վարդանանց և Դեռնդեանց նահատակութեանց 1500-ամեակը: Քաջն Վարդանի և իրեն հետ նահատակուող Հայ քաջարի և անվեհեր զօրավարաց և զօրաց մեծ հմայքը մեր ամբողջ Հայ ժողովուրդին մէջ միշտ խանդակալու, միշտ վառ և միշտ խնկելի մնայ:

ցած է և պիտի մնայ: Անոնք երանելի ու խնկելի և հերոսածին սուրբեր են, վերժամանակէն և միջոցէն և անոնցմէ իւրաքանչիւրը կարմիր վարդանէն սկսեալ կենդանի հերոսներ են իւրաքանչիւր Հայ հռդիին համար: Քաջն Վարդան Մամիկոննեանին և իրեն հետ նահատակուող ընկերներուն յիշատակը կը մնայ միշտ վառ, խանգավառող և հոգեցունց, չի տժգունիր անվեհներ և քաջամարտիկ Մամիկոննեան զօրավարին գէմքը ժամանակի մաշեցնող յշուշին ներքեւ: Քաջն Վարդան սիր կարմիր արիւնով պսակեց Ս. Եկեղեցին»: Արդեօք, սրբազան խենթութիւնն մըն էր իրենց կատարածը... ո՞չ, վասնդի՝ անոնք համոզումով, զիտակցութեամբ պայքարեցան և նահատակուեցան և դիւանազիտական հաշիւներ հոն տեղ չգտան ամեննեին:

Քաջն Վարդան արհամարեց և մէկդի նետեց բոլոր հաշիւները, բոլոր նկատումները և ան Աւարայրի Պատերազմին մէջ փրկեց Հայութիւնը, մեր հաւատքը և կրօնքը:

Վարդանանք և Ղեռնդեանք մօտ են բոլոր Հայ սրտերուն և անոնց յիշատակը անմահ է և յաւիտենական: Ով որ Վարդանը կը սիրէ, կը սիրէ ազատութիւնը և Հայոց պատմութեան թատերաբիմին վրայ Հայերը սիրած են Վարդանը, կը սիրեն Վարդանը և պիտի սիրեն զայն ընդ երկար և յաւիտեան: Ոչ մէկ Հայ կրնայ ուրանալ անոր և անոնց կատարած մեծ զործը, վասնդի՝ անոնք ազատութեան կրօնքի, խղճի և հայրենիքի փրկութեան, ազատագրութեան և տեսականութեան համար, պայքարեցան, ինկան, գէմ կեցան Սասանեանց բոնապետական ուժին առջեւ: Հայոց հետապնդած նպատակները յաջողութեամբ պսակուեցան, Քաջն Վարդան Մամիկոննեանին եղբօրորդի, Քաջն Վահան Մամիկոննեանին կողմէն 484-ին Նուարսակի դաշինքը, Վարդանանց զօրավարաց արիւնովը կնքուեցաւ և նըւիրագործուեցաւ:

Անոնք քաջաբար, առանց տատամասումի ըսին Յազկերտին, արքայից արքային և թէ մեզի այս հաւատքով թողուս, քու տեղդ ոչ երկրի վրայ ուրիշ տէր կը փոխանակենք և ոչ ալ երկնքին մէջ Յիշուս Քրիստոսի տեղ Աստուած կը փոխա-

նակենք, քանի որ անկեց զատ ուրիշ Աստուած չկայ» (Բ. Յեղանակ):

* * *

Վարդանանք և Ղեռնդեանք, իրաւամբ և ճշմարտութեամբ մերժեցին արևապաշտութիւնը, չուզեցին ենթարկութիւնը կրակին պաշտամունքին, քաջ զիտնալով որ կրակին պաշտօն մատուցանելով պիտի մոխրանային առյաւէտ:

Անոնք, Աստուածոյ միաձին Որդւոյն և մարդացեալ Աստուածոյ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ ծառաները և երկրագուները եղան, և ո՞չ թէ ածառայք արեգական: Անոնք եղան հաւատքի, կրօնքի, հայրենիքի հերոսներ, սուրբեր և տիտաններ ու ախոյեաններ: Փառք և պատիւ Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց և Ղեռնդեանց սրբազնագործ քահանայիցն մերոց և բիւր օրհնութիւն իրենց անմահական և յաւերժական յիշատակին: Աղօթենք և մաղթենք որ, Տէրը՝ որ տէրն է կենդանեաց և մեռելոց՝ անշարժ և հաստատուն պահէ Հայոց Ս. Եկեղեցին և լուսոյ խորան Ս. Էջմիածինը և անոր Գահակալին Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Գէորգ Զ. Հայրապետին պարգևէ արեւատութիւն և երկար կեանք ի Տեառնէ, թող Տէրը պահէ ու պահպանէ Հայոց Ժողովուրդը ի Հայաստան և ի սփիւսու աշխարհի ի շինութեան, ի լուսաւորութեան և ի պայքառութեան Յարեխոսութեամբ վերին քո զօրաց՝ միշտ անշարժ պահեա զ Աթոռ Հայկազնայս»: ամէն:

ՊԱՐԴԵԼ ՎՐԴ. ՎՐԹԱՆԿԱՆ

(Նարունակելի՝ 10)



ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԵՐ

ՀԱՂԲԱՏ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Հին Հայաստանի, մւտի նահանգին Զորոյ Դեմ գաւառին մէջ, այժմու Լոռի քաղաքին մօտ, կը գտնուի Հաղբատի Ս. Նշան երեսի վանքը: Ունէր երեք եկեղեցիներ, Ս. Նշան, Ս. Աստուածածին (= Կաթուղիկէ) և Ս. Դրիգոր. — Հայոց էջ 557: Հաւուց թառ, էջ 64 Բ. Զալ. Ա. էջ 54: Հմմտ. նաև Ռուստամ Բէկ Երզնկեանց, Արարատ, 1886, էջ 446:

ՊԱՍՄԱԿԱՆ. — Հաղբատի վանքը չինուած է 967 թուին, Աշոտ Գ. Աղոմածի տիկնոջ Խոսրովանոյշ թագուհին կողմէ. — Վար. 90, Սամ. էջ 100: Յաջորդ դարերուն հօն թաղուած են բազմաթիւ Հայիշաններ: Այս նշանաւոր վանքին առաջնորդներէն ծանօթ են հետեւալները.

1. — Սիմեոն ձգնակեաց, 967-1005, որ աւարտած է Խոսրովանոյշ թագուհի կիմուծ Կաթուղիկէ եկեղեցին չինութիւնը (991). — Ասողիկ Գ. ը. էջ 168: Սիսն, 1935, էջ 190: Արարատ, 1886 էջ 489: 1887 էջ 217:

2. — Յովհանի, 1008. — Սիսն, 1935 էջ 190:

1016 թուին Մուկն իշխան, որդի Հանգարայ, կը նորոգէ Հաղբատի եկեղեցւոյն Կաթողիկէն, որ սաստիկ երկրաշարժէ մը խախտուած էր. — Զալ., Ճանալ. Ա. էջ 53, 68:

1081. — Հաղբատի մէջ Անիի Բարսեղ եպիսկոպոսը կը ստանայ կաթողիկոսական ձեռնադրութիւն, Աղուանից Ստեփանոս կաթողիկոսէն, Կորիկէ թագաւորի հրամանով. — Ուռհ. էջ 266: Աղգալ. էջ 1303:

3. — Սարգիս Եպիսկոպոս, 1081-1089. — Նախապէս Կիւրիկէի արքունի աւագերէցն էր, զոր Աղուանից Ստեփանոս և Անիի Բարսեղ կաթողիկոսները կը ձեռնադրեն արքեպիսկոպոս Հաղբատայ, ստալով վիճակս յերկուց կողմանցն. — Կիր. 56: Վար. 104-5: Արարատ, 1887, էջ 218:

Իր օրով (1082?) կը վախճանի Աղուանից թագաւորը Կիւրիկէ, Դաւիթ Անհողինի

որդին, և կը թաղուի Հաղբատի վանքը:

1104-5 թուերուն եղը անունով ըրունաւորը կը կողոպտէ և կ'այրէ Հաղբատի վանքը. — Սամ. էջ 121:

1123 թուին հօն կը վախճանի և կը թաղուի Յավհաննէս Ապրկաւագ վարդապետ. — Սամ. էջ 129:

1149 թուին պատահած երկրաշարժը կը կործանէ Հաղբատը. — Սամ. էջ 132:

4. — Յովհաննէս Ա. Եպիսկոպոս, 1151. — Կը վերաշնէ Հաղբատի եկեղեցիները. — Արարատ, 1886 էջ 451:

5. — Գևորգ Եպիսկոպոս, 1158. — Կիր. 56: Սիսն 1935 էջ 280: Սիրմ. Ց. Զեռ. Երաւանակմի, էջ 200:

6. — Բարսեղ Արք. Աւանանց, 1172-89. — Կիր. 56: Սիսն, 1935, էջ 280: Զալ. Ա. էջ 65, 74:

7. — Յովհաննէս Բ. Եպս. Գոփեանց, 1195-1204. — Կիր. էջ 56: Հայոց էջ 383: Տես նաև վարը:

8. — Գրիգոր Եպս. Տուշեողի, 1204? — 1207? — Քեռորդի Զաքարէի և Խւանէի. մասնակցած է Լոռի ժողովին և սաստիկ հակառակած Զաքարէի պահանջած կանոնական փոփոխութեանց. — Կիր. էջ 56, 83-5:

Յովհաննէս Բ. Եպս. Գոփեանց, գարձեալ, 1207-1221. — Եղած է առաքինի և շինարար անձ մը: Հաղբատի Ս. Դրիգոր եկեղեցին նորոգած է 1211ին: Նախկին փոքր գաւիթը քանդել տալով անոր տեղ կառուցած է ուրիշ մը մեծ և զեղեցիկ, 1221 թուին. — Կիր. էջ 56, 85, 111: Արարատ, 1887 էջ 169, 219: Սիսն 1934 էջ 111: 1935 էջ 280, 311: Զալ. Ա. էջ 57, 63, 66:

Իր առաջնորդութեան շրջանին Տիկին Խաթունչ շինել կուտայ Ս. Աստուածածին կաթողիկէ եկեղեցին, ի յիշատակ իր Երկու եղբայրներուն Սենեքերիմի և Սևադայի, որոնք թաղուած են նոյն եկեղեցին գրան մօտ. — Զալ. Ա. էջ 65:

9. — Յովհաննէս Գ. Արք. Գոփեանց, 1222? - 40? — Եղբօրորդին էր նախորդին և քեռորդի Զաքարիս և Խւանէ իշխաններ. — Քեռորդի Զաքարիս և Խւանէ իշխաններ. — Կիր. 56: Արարատ 1887 էջ 220: Սիսն 1935 էջ 281: Խաղը. Ա. էջ 99, 158:

10. — Յովհաննէս Գ., որդի Աղուանից Եպս. Երկու տարի, 1241-2? . — Կիր. էջ 56:

11. — Համազասպ Արք. Անեցի, 1243
— մ. 1261. — Ելինած է եկեղեցի, զանգաւ-
հատուն (1244) և ժամատուն (1253-7). —
Կիր. 57, 65, 174; Հ. Դպր. էջ 741;
Տաշ. Յ. էջ 592, 984; Արարատ, 1887,
էջ 170, 173, 218; Սիռն 1935 էջ 281; Հաւ-
ուց Թառ, էջ 64; Զալ. Ա. էջ 55, 57,
58, 76.
12. — Ցովիաննես Ե. Նպա. Դոփեան,
1261-1307. — Որդի Վաչէի և Սասնայի:
Ելինած է Հաղբատի Գրատունը, կանգնել
տուած է Ամենափրկիչ խաչը վասն ա-
րեւշտութեան Աթաբէգ Ամիրսպածաւար
Պարոն Սագունի, և լն. Ցորդորած է Ցով-
հաննէս Երգնկացին գրելու իր օթազագս
Երկնային Շարժման» աշխատութիւնը: Օքք.
Բ. էջ 209; Արարատ 1887 էջ 215; Ազգ.
Հայո. 1901, է-ը. էջ 407; Սիռն 1933 էջ
20: 1935 էջ 281, 311; Հաւուց Թառ, էջ
60 Բ: Զալ. Ա. էջ 20, 70, 72:
- Վարդան Վրդ. հոս կը գրէ Երգոց Եր-
գոյն Մեկութիւնը, 1265 թուին. — Հայո.
էջ 471; Սիւրմ. Յ. Զեռ. Երուսաղէմի, էջ
297:
13. — Տէր Զաֆարիա Արինեպիսկո-
պոս, 1436-8. — Կոնիքիր, Յ. էջ 96;
Հայո. էջ 557-8:
14. — Գրիգոր Եպիսկոպոս, 1441. —
Ինձ., Ստոր. Հին Հայաստանեաց, էջ 346;
Թ. Մեծ. Ցիշտէկ., էջ 52:
15. — Աստուածառւը Եպա., և իր եղ-
բօրորդին Ցովիաննես Եպա. — 1469. — Կիւ-
լէսէրեան, Ցուցակ Հ. Զեռ. Ազգ. Մատե-
նագարանին Հայոց ի Ղալաթիա, անտիպ,
էջ 1227, թիւ 172:
16. — Ցովիաննես Արինեպիսկոպոս,
1494. — Զեռ. Ա. Յ. Թ. 1627:
17. — Աւետիս Արինեպիսկոպոս, 1651-
61. — Արարատ, 1911 էջ 119: Իր օրով
Խոջայ Բէհրուդ նորոգել կուտայ Ս. Նշանի
հարաւային կամարը. — Զալ. Ա. էջ 69:
18. — Գրիգոր Վարդապետ, 1738. —
Կալվածագրեր, էջ 171:
- 1770 թուին հաւանաբար, Սայեադ
նովա աբեղայ կը ձեռնադրուի Հաղբատի
վանքին մէջ. — Ազգագ. էջ 3625:
- 1822 թուին Եփրեմ կթզ. Կ'ապաստանի
Հաղբատ, ուր հազիւ կրնայ ճարել երեք
խոնաւ խուցեր. — Ազգագ. էջ 3487:
- 1827ին Անտոն Արք. Երևանցի կը նո-
- րոգէ վանուց ջրուղին. — Արարատ, 1887
էջ 172:
19. — Զաֆարիա Վրդ. Լալայեան. —
1925-1934:
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Հաղբատի վանքը
մին էր Հայաստանի նշանաւոր ուսումնա-
կան կեդրոններէն: Ան տուած է շարք մը
մատենագիրներ, ինչպէս, Ցովհաննէս Սար-
կաւագ վարդապետ, Դաւիթ Ալաւեայ որդի,
Գրիգոր որդի Թոքակերի, Վարդան վար-
դապետ Հաղբատացի և Դաւիթ Վրդ. Քո-
րայրեցի:
- Հաղբատի վանքը յատուկ չէնք ունէր
իրեւ գրատուն, 1179 թուին յիշատակուած,
ուր հաւաքուած էին հին և արժէքաւոր
ձեռագիրներու: Առոնցմէ մէկ մասը, որ կո-
ղոպտիչներու ձեռքէն՝ աղատելու համար
պահած էին մօտակայ քարայրներու մէջ,
երեսն հանուեցաւ 1880 ական թուական-
ներուն մասամբ քարացած վիճակով:
- Հաղբատ ունէր նաև իր գրչութեան
դպրոցը, որմէ սակայն քիչ բան հասած է
մեզի:
- Ա. — Ցովհաննէս Գրիէ, 1019 թուին
օրինակած է Նարական մը. — Կար. Թ.
1535: Սիռն, 1935 էջ 311:
- Բ. — Գրիգոր Գրիէ, Տէր Բարսեղի ա-
ռաջնորդութեան ժամանակ (1172) օրինա-
կած է.
1. — Գիրք Վեցօրեից Ս. Բարսղի. —
Աթան. Ցոջ. ԺԲ:
2. — Մեկնուրիւնի, Արարածոց, Ղե-
տական Գրոց, Ցեսուայ, Դատաւորաց, և
Թագաւորաց. — Զարք., Թրզմ. էջ 344:
- Գ. — Սարգիս Գրիէ, 1172ին օրինակած
է Ս. Բարսեղ Կեսարացիի Ճառերը, Առաջ-
նորդ Բարսեղ Եպիսկոպոսի հրամանով. —
Սարք. Թ. 314: Հայո. էջ 382:
- Դ. — Ցովսէփ Վարդապետ, Կազմող.
1172 թուին կազմած է Սարգիս Գրիէ օրի-
նակած վերոյիշեալ գործը. — Հայո. էջ
382:
- Ե. — Խաչատուր Արեղայ, Գրիէ, ա-
շակերտ Դաւիթ վարդապետի, 1195ին օրի-
նակած է մէկ Մեկն. Համաբարբառ Աւե-
տարանի, Ս. Եփրեմի. — Հայո. էջ 383:
- Զ. — Առաքել Քահանայ, Գրիէ, 1207ին
օրինակած է մէկ Խոայի և Ժ. Թուլլրի
Պաւլոսի, որուն ստացողն է Ցունան քա-
հանայ. — Սիռն, 1935 էջ 312:

ի. — Սուքիս Կազմող, 1209 թուին, Հաղբատի մէջ կազմած է Սոաքել քահանայի օրինակած վերոգրեալ հատորը. — Սիռն, 1935 էջ 312.

ի. — Յակոր Գրիչ, 1211ին օրինակած է Աւետարան մը, որուն սրբագրութիւնը կատարած է Միսիթար Քոբայրեցի, Նկարագրդած է Մարգարէ Աբեղայ: Ստացող՝ Սահակ կրօնաւոր Անեցի: Զեռ. Էջմ. թ. 6288. — Սիռն 1934 էջ 110: Արցախ, էջ 262-3:

թ. — Մարգարէ Գրիչ և նշ. Մալկոլ, 1211ին ծաղկած է Յակոր Գրչի օրինակած Աւետարանը. — Սիռն, 1934 էջ 110: 1935 էջ 190.

ժ. — Պովինաննէս Կրօնաւոր, 1243ին օրինակած է Սահմանաց Գիրք մը, Պետրոս վարդապետի ծախքով. — Կար. թ. 1848: Զեռ. Էջմ. թ. 1890: Ման. Յուն., էջ 259:

ժ. մ. — Պետրոս Կազմող, 1243ին կազմած է իր գրել տուած Սահմանաց Գիրքը. — Յովո., Մի էջ, 5: Սիռն 1935 էջ 282: Ման., Յուն. Դպր., էջ 261:

ժ. մ. — Պովինէփ Գրիչ, աշակերտ Վարդանայ, 1267ին օրինակած է մէկ Պատմու Տօնից Տերունականաց, Տիրացու Գրչի հետ. — Շողակաթ էջ 202: Հաւուց Թառ էջ 64:

ժ. մ. — Տիրացու Գրիչ, 1267ին մասնակցած է վերոյիշեալ գրքի օրինակութեան. — Նոյն, անդ:

ժ. մ. — Մարտիրոս Գրիչ, 1417-1437, որդի Խոցագեղի և Սոնդիկի. Հաղբատի մէջ օրինակած է,

1. — Նարակնոց, 1417ին. — Նոտարք, էջ 52:

2. — Նարակնոց, 1437ին. — Նոտարք, էջ 112-3: Կոն. թ. 47:

ժ. մ. — Պովինաննէս Քահանայ, Գրիչ, 1438ին օրինակած է ձառոց մը. — Նոտարք, էջ 115: Հայր. էջ 557:

ժ. մ. — Գրիգոր Աբեղայ, Գրիչ, 1455ին օրինակած է Աւետարան մը. — Արցախ, էջ 281 է:

ժ. մ. — Խաչատուր Աբեղայ, Գրիչ, որդի Յովհաննէսի և Հաղբէվարդի, 1494ին օրինակած է Նարակնոց մը, Մկրտիչ Դպրի համար. — Զեռ. Ս. թ. 1627:

ժ. մ. — Փիլիպպոս Եպիսկոպոս, 1498ին օրինակած է մէկ Մատոց Զեռնադրութեան. — Կար. թ. 1055:

Ն. ԵՊԱ. ԾՈՎԱԿԱՆ

ՀԻՆ ԷՉԵՐ

ԳՈՎԵԱՏ ՃՇՄԱՐԻՏ

ՍԱՂՄՈՍԻՆ⁽¹⁾

Աաղմոսը մեր մատենագրութեան մէջ շատ զովուած գիրքերէն մին է եղած արգարեւ: Ստորև կուտանք քերթողական անոնց և նորաբարդ բառերով զրուած Գովեատ մը, արտագրուած մեր թիւ 265 Զեռագրին: Սաղմոսարան-Ժամապիրք մըն է աս, շահնեկան այլեալ տեսակէտներով: Զեռագրիս գլխաւոր յիշաւակարանը հրատարակած էինք Սիռնի 1948 տարւոյ Յուլիս-Օգոստոսի թիւին մէջ, էջ 213: Ներկայիւս ի լոյս կ'ընծայինք ուրիշ մըն ալ, որ կը գտնուի Ժամապրքի բաժնին վերջաւորութեան (թղ. 242):

«Ով պատուական ստացաւղք և տեսանաւղք՝ զիտացիք, ի Գորդ վարդապետին աւրինակէն գրեցի, և նա՝ գրեալ էր ի յիշատակարանին, թէ որ «ք յինթենուելն զսա՝ այլափոխ բանիցն պատահենոցէ՝ մի տղիտութեան վարկցի կամ անձնահաճութեան, և մի՛ համարձակեցի յեղաշբջել բան ինչ, զի յաւրինակէ մեկնութեան տեսան Խոսրովու ուղղեցի՝ որչափ գոտի զինմանէ քննեալն: Եւ թէ կամիցիս զիսել թէ ոյք են ի նմանէ քննեալքն՝ զտանիցիս յանցնիւր տեղւող զանունն իւր դրաշմեալ սեագեղով:»

Աղաչեմ յիշել զբարեապաշտունի ստացաւղն և զամենայն զարմն իւր, այլ և ըզգծաւո. — Այսպէս. յաշորդ երեսը պարապէ. ապա կուգան աւետարանական հատուածներ:

Եոյնը կը գտնուի նաև թ. 174 Սաղմոսարանին սկիզբը, էջ 29. — զրուած 1638ին — և կը ներկայացնէ բազմաթիւ տարբերութիւններ, զոր կը նշանակենք, համեմատելով հնագոյն ձեռագրին հետ: Աստուածատունիս⁽²⁾ այս՝ հոգեաբողբոջ⁽³⁾ բուրաստանս սաղմորթափթիթ⁽⁴⁾ յոդ-

(1) Գովեատանութիւն Սաղմոսի, ասացեալ ի սրբոց վարդապետաց:

(2) Աստուածատունին:

(3) Զունի:

նապտուղ հոյլ⁽³⁾ բիւրաբանութեամբ բեղմ-նաւորեալ, մանաւանդ քնարս բազմայար-մար սքողաշուք երկնաւորին հարսինս ե-կեղեցւոյ, հանուրասփիո տիեզերագոչ, ո-լորտահնչաւզ, ազդարարակ, անմահագործ լցեալ զաւրութեամբ, զոր ամենասուրբ հովին սատար ի բարձանց ի շրթունս թե-լագրեալ մարգարէին, միանգամայն և թա-գաւորին, բոլոր բովանդակ աստուածային պարզեացն, անկեաւ⁽⁵⁾ անկողոստելի յաւ-րապայծառ մշտագուարթ⁽⁶⁾ պատմուճան. Իսկ կոչումն փառաւորութեան անուան սորա⁽⁷⁾ Սաղմոսարան, որ է նոյնինքն աւրհնաւթեանց երգարան, ըստ օրում բա-ղաձայնէ⁽⁸⁾, աւրհնեցէք զտէր յաւրհնու-թիւն նոր:

Վասնզի սաղմոս⁽⁹⁾՝ սնընդակից է հոգ-ւոյ, դայեակ մտաց, տածումն⁽¹⁰⁾ խորհըր-դոց, զարգացումն մարմնոյ, աւարտ հա-սակի, պճնումն զիմաց, զաւրութիւն ան-դամոց:

Սաղմոս⁽⁹⁾ զէն պատերազմողաց, վա-հանակցութիւն⁽¹¹⁾ ախոյանից, նիզակակից յաղթողաց, սուսեր անծլելի⁽¹²⁾, վատնումն թշնամեաց, հերքումն հակառակորդաց, հէն հատուածելոց:

Սաղմոս⁽⁹⁾՝ պահպանութիւն տանց, ճանապարհ ուղեգնացաց, աւժընդակ վաս-տակելոց, նաւահանզիստ⁽³⁾ նաւելոց⁽³⁾, առազաստ սարտուցելոց, դզեակ զարհու-րելոց, զէտ մոլորելոց:

Սաղմոս⁽⁹⁾՝ ահարկու զիւաց, սարսումն բանսարկուին, պապանձումն ոգեգաւ դա-ւողացն, ընդդիմակ հակառակորդին յան-դըգնութեանց:

Սաղմոս⁽⁹⁾ գանձարան փարթամաց, հո-խութիւն աղքատաց, ապաշխարութիւն⁽¹³⁾ զզչացելոց, ապաշաւ⁽¹⁴⁾ մեղուցելոց, ա-

(4) Սաղարթազարդ սաղմոսարան, տունկ ի հոգւոյն է պտղալի, անուշահամ և հրաշալի:

(5) Անկեալ:

(6) Մշտագուարթ:

(7) ՏՐ:

(8) Քաղցրաձայնէ:

(9) Սաղմոսս:

(10) Մածումն:

(11) Վահան նահատակաց, աւզնական:

(12) Անծալելի:

(13) Ապաշաւ:

(14) Ապաշխարութիւն:

պաստան յուսացելոց, ապաւէն փախուցե-լոց:

Սա⁽⁹⁾ եկեղեցւոյ զարդ, վարդապե-տաց գպրութիւն, քահանայական պարուն անձախական սեղան⁽¹⁵⁾, թագաւորաց զո-վեստ, զաւրաց շահատակիւն, հանգիսացե-լոց առջապահեստ, մանկանց գաստիարակ, ծերոց փոռք, երիտասարդաց զգաստու-թիւն⁽¹⁶⁾, կուսանացելոց համբերութիւն, մե-ռելոց պատանք, վշտացելոց սփոփանք, առհաւատչեայ հանդերձ յարութեանն յու-սոյ:

Սովաւ⁽¹⁷⁾ խաւսք ընդ Աստուծոյ, հա-մարձակութիւն կենաց, պայծառութիւն տանից, բերկրումն ժողովրդոց, քակտումն ամպարշտութեան, քանդումն հերձուածո-դաց, քայքայումն աղանդասորաց, պարու-նակ հոգեշար բագձածեալ բովանդակ կենաց մերոց ի պտոյտո⁽¹⁸⁾ անկայիս:

Վասնզի երգ սաղմոսաց ազգեալ ի յո-գիս շարժէ առ Աստուած զրոց սիրոյն, և ոչ միայն այս, այլ և ի քարատեսակ սըր-տից արտաւոր արտաքս թորեցուցանէ, ըզ-հիւանդութիւն բժշկէ, զրոց յանկութեան շիջուցանէ, զրտմանութիւն մեռուցանէ, զոխակալութիւն զնսուուցանէ, յլկէ զնա-խանձ, նահանջէ զլեզու, խոնարհեցուցանէ զամբարտաւանութիւն, արիացուցանէ ըզ-վատութիւն, զանձնիշխանութիւն յաւրի-նաւորն կապէ սահման, աւետարանական քաղաքավարութեամբ զրովանդակ զիեանս մեր պայծառացուցանէ ի թրիստոս Յիսուս ի տէր մեր, որում փառք յաւիտեանն յա-ւիտենից ամէն, ամէն, ամէն:

Հրամ. Ն. ԵՊԱ. ԾՐՎԱԿԱՆ.

(15) Երգարան: Սաղմոսս:

(16) Զգաւնութիւն:

(17) Սովաւ այս սաղմոսարանաւու:

(18) Ի պիտոյա:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀՅՈՒՅ

ԴԻՐՁ ԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ ՊԵ

ՀԱՆԴԵՊ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻ ԱՅ

Իր շահամոլ տրամադրութիւններուն արդինքը եղաւ Սնիփի յանձնումը Յունաց, որոնք այսպիսի անակնկալ նուիրումէ մը զացած՝ պահ մը մոռնալ կեղծեցին կրօնական ամէն խտիր եւ նոյնիսկ Վասիլ կայսր՝ խորամանկ քաղաքականութեամբ՝ իր զըլխուն վրայ օրհնեալ ջուր ընդունեց Գետադարձի ծեռքէն (Ղաստիվերտցի, Սմբատ, Կիրակոս, Վարդան եւայն): Բայց երբ անոր յաջորդեց Խաչիկ Բ. Անեցի, միութեան խընդիրը բռնութեան ծեւ մը առաւ Յունաց կողմէ. պետական ուժով Պոլիս տարուեցաւ նա ուրիշ եպիսկոպոսներու հետ (1054), ուր ծանր սպառնալիքներով առաջարկուեցաւ իրեն՝ ընդունիլ քաղկեդոնականութիւնը՝ հպատակիլ Պոլսոյ Աթոռին՝ եւ տարեկան տուրք վճարել: Անեցի հայրապետը անհանդուժելի խոշտանգումներու տակ պահեց իր կորովի աննկուն կամքը՝ պատասխանելով ամէն հարուածի. «Զոր մինչեւ ցիմ ժամանակն չէ՝ լեալ՝ եւ ո՛չ ես հաւանիմ» (Ա.աս. էջ 60): Երեք տարուան անարգ ընակութենէ մը վերջ ի Պոլիս՝ Խաչիկ իշխանական միջնորդութեամբ վերադարձաւ իր Աթոռը եւ մեռաւ 1060 ին: Գրիգոր Վկայասէրի անձնական դիրքին եւ իշխանական ազդեցութեան շնորհիւ իրողութիւնները բարեփոխուեցան մասամբ: Նա սկսաւ ցրջիլ ամենուրեք, Պոլիս, Եղիպտոս, (Հուռմ ??). իր յարաքերութիւնները աւելի զրական երանգ մը ունին բան թէ Եկեղեցական-կրօնական. յայսմաւուրք մը կ'ուզէր պատրաստել նա:

Իր յաջորդներու ատեն շատեր պիտի ջանան իր ճամբորդութիւններուն եւ ընթացքին մէջ կռոււան մը գտնել մերձաւորութեան ու շփման, բայց իրապէս նա ո՛չ մէկ բան տուժել տոււը իր Եկեղեցւոյն դիրքէն. եւ Եղիպտոսի Աթոռն իրեն կը

պարտինք: Իր յաջորդին՝ Գրիգոր Գ. Պահլաւունիի օրով յունական ազդեցութիւնները կը սկսին նուազիլ նետզնետէ եւ լատինականը կը զօրանայ, օրուն վրայ պիտի խօսինք առանձինն: Խուրինեանց իշխանութիւնը սկսած էր մտահոգ ընել կայսրութիւնը որ ամէն հնարք ի գործ կը դնէր իր խանձարուրքին մէջ ջնջելու համար զայն: (Ղետն Ա. էջ 1141) հակառակութեան յայտնի զո՞ր եղաւ: Թորոս Բ. (1145 - 68) բանից ջարդեց Մանուէլ Կայսեր բանակները եւ խաչակիրներուն օգնեց: Կայսրը ամէն խարդաւանութիւններէ յուսահատ՝ կրօնական միջոցի դիմաց, Եկեղեցական միութեան ծեւին տակ Կիլիկիան զարձեալ զրաւելու եւ Խուրինեան նորածիլ իշխանութիւնը ունչացնելու համար: Շնորհալիի կաթողիկոսութեան միջոցին է որ նա վերջին փորձ մըն ալ կ'ընէ, թէեւ ապարդիւն: Մանուէլ կայսր՝ Շնորհալի եպիսկոպոսին կողմէ: իր Ալեքսիս փետակին տրուած խոստովանութեան զիրը (Տե՛ս Ընդհանրական, էջ 56-57) կարդալէ վերջ, — ուր զրուած էր թէ «Ասեմք մի բնութիւն ի Քրիստոս ո՛չ շփոթմամբ ըստ Եւղինեայ, այլ ըստ Կիրդի Աղեքսանդրացւոյ...» «Մի է բնութիւն Բանին մարմարացելոյ» (էջ 61), — հետեւեալ տողերը կ'ուզէր Գրիգոր Գ. Պահլաւունի հայրապետին. «Խորիի թագաւորութիւնս մեր՝ լինել միջնորդ միաւորութեան բաժանման ծերոյ. քանզի զպատուականութիւնն ծեր եւ զաստուածասէր մտադիւրութիւնն ծանեայ ի ծեռն այս զրոյ» (Ընդհ. 68): Այս նամակը երբ Հայաստան հասաւ՝ հայրապետը մեռած էր արդէն (1165) եւ Շնորհալի յաջորդած անոր: Սա իրեւ պատասխան՝ Երկար նամակով մը (Ընդհ. 69-89) մանրամասնարար կը ներկայացնէ Հայ Եկեղեցւոյ դաւանան-

քը ամէն տեսակէտէ, եւ վերջաբանին մէջ կ'ըսէ. «Դուզնաբենայ բանիս մերոյ սերմն ի բարի եւ ի պարարտ անդս մտաց ձերոց սերմաննալ՝ անեցան եւ բազմապատիկս արացէ Աստուած»: Կայսրը յիտոյ իր կողմէ կը զրկէ: Թէոռիանոս Մայիստոր եւ Յովհաննէս Ռւթման, որոնց վիճաբանութիւնը (ՏԵ՛ս Կղ. Կալ. Ա. 239 - 324) հասած է մեզի: Քանիցս կը թղթակցին Յունաց կայսրն ու Պատրիարքը եւ Շնորհալին: Մանուէլ վերջապէս ինը առաջարկներ կ'ընէ՝ որոնց համեմատ Հայերը պէտք է ընդունին երկու ընութիւն, Դ. տիեզերական ժողովը, նզովն Դիոսկորոսը, զրախառն գինիով եւ խմորուն հացով պատարազեն եւ վերջապէս կ'ըսէ. «Զի ընդունիցիք զյառաջարկութիւն կաթողիկոսին միայն ի թագաւորէն Հոռոմաց» (Ընդհ. 97): Շնորհալի հայրապետը տեսնելով որ Յոյներն առանց իրենց կողմէ զիջում մը ընելու մտադիր են Հայերը բաղկեդոնականացնել եւ կապտել ամէն ազատութիւն, բաղաքավարութեամբ կը մերժէ եւ Սրբւելեան Հայերու կարծեաց անհրաժեշտութիւնը կը յայտնէ առայդ. «Հիմն հաստատութեան մեր նորա են, եւ զիսոյն անհնար է առանց անդամոցն՝ գործոց իրիք կատարումն առնել»: Յետոյ Տարսոնի ժողովին մէջ Հայերը պատասխանած են այդ պահանջումներուն, եւ ըրած են այնպիսի պահանջումներ՝ որոնք ո'չ մէկ ատեն կրնային ընդունուիլ Յոյներու կողմէ (Կղ. Կալ. Ա. Էջ 344): Շնորհալի մեռած էր արդէն (1173) երբ կայսեր վերջին նամակը Հայաստան հասաւ: Դրիգոր Դ. Տղայ նոյնքան եռանդով շարունակեց իր նախորդներուն խաղաղասիրական ծեռնարկները. թըղթակցեցաւ Մանուէլ կայսեր եւ Միքայէլ պատրիարքի հետ, որոնք այս անգամ ժողովական բազմատորազիք նամակներ՝ զըրկեցին իրեն, մաղթելով. «Յուսամբ եւ հաւատամբ զի որպէս իրաւացի է եւ աստուածահանոյ ի փառս Աստուծոյ ծայնակցիմք ի մի եկեղեցի ամենասուրբ անուանն Աստուծոյ հասարակ եւ համախոհ փառատրութեամբ»: Տղայի պատասխանները տակաւին Պոլիս չի հասած՝ փախանակեցաւ Միքայէլ Պատրիարք: Երկար չ'ապրեցաւ նաև Մանուէլ կայսր (+1180), չի կրնալով տեսնել եղբակացութիւն Տարսոնի (= Հռոմէլայի) հոչակաւոր ժողովին որու զիւցազննէր օտարասէրներ-

սէս Լամբրոնացի՝ իր ատենաբանութեամբ. (Կղ. Կալ. Ա. 326 - 45): Միութեան պաշտպաններուն անհետացումով վերջացաւ նաև երկու եկեղեցիներու միացման խնդիրը, որուն այնքան հակառակ էին Սրբւելքի Հայ վարդապետները: Մեր եկեղեցւոյ պահապանողական տարրը կը կազմէին ասոնք. եւ զգալով բաղաքական դիտումները կրօնքի սիրով շաբարուած ծեռնարկներուն, կը զգուշացնէին միջու Պահաւ հայրապետները՝ իրական արդիւնքի մը համնելէ (Տես «Նամականի Գրիգոր Տղայի», Տուտերդիի Վիհաբանութիւնները. Ընդհանրական, Աս. Օրբէլեան, եւայլն):

Պահաւունի կաթողիկոսներու հետ վերջացած կը համարենք նաև յունական միութեան կազմակերպեալ փորձը, թէեւ մինչեւ 1451 ինչ ինչ դէպքեր ալ կը տեսնուին. շուրջ 1253 ին Յովհաննէս Դիուկաս կայսր՝ Նիկոյ կողմերը սկսաւ իր բաժնին Հայերը նեղել իրեն եւդիքական, եւ շանաց բաղկեդոնականութիւնն ընդունիլ տալ. բայց Կոստանդին կաթողիկոս եւ Հեթում թագաւոր՝ պատգամատոր զրկեցին զթակոր Կլայնցի վարդապետը՝ որ զնաց եւ խաղաղնցուց խնդիրները (Կիրակոս), տակաւին հոս ու հոն ցանցառ փորձեր կը տեսնուին երբեմն, բայց ո'չ մէկ ուշագրաւ արդիւնք. Հայերը շուրջ հազար տարուան փորձառութեամբ շատ լաւ ուսումնասիրած էին բիւզանդական բաղաքականութեան փաղաքուշ խարդաւանութիւնը . . . :

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՀՈՌԱՄԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Համեմատաբար յիտնագոյն ժամանակի մը կը վերաբերի Հայոց յարաբերութիւնը Հռովմէական եկեղեցւոյ հետ: Արդարեւ, Քրիստոնէութեան առաջին դարերուն, կայսերական լէգէոններն միշտ անպակաս էին Հայաստանէն, մերթ իրեւ թշնամի եւ երբեմն նաև իրեւ բարեկամ: Մեծն Տիգրանի աշխարհակալ զգումներն ընդհանուր նրբական մը ունեին, Միհրդատի եւ Պոմալէոսի պատերազմները տակաւին շատ թարմ էին մտքերու մէջ. եւ ներոնի ժամանակ Տիգրիթ այցելած էր. Յաւետնական բաղաքը: Աւ Տրդատ Հռովմի մէջ ցոյց տուած էր իր առասպելական ոյժին առաջին յայտնութիւնները, եւ հայրենի գահը բարձրացած էր

հռովմէական քաղաքականութեան շնորհի՝ որ կը ջանար իր անմիջական ազդեցութեանը տակ ունենալ Հայաստանը։ Սակայն, հակառակ երկու հեթանոս աշխարհներու յանախակի յարաբերութեան, քրիստոնէացած Հռովմին ու Հայաստանը շատ ուշ նանցան զիրար։

Հռովմայ Աթոռը քրիստոնեայ աշխարհի մէջ պատույ դիրք մը գրաւեց առաջին օրէն, զոր կը պարտէր անտարակոյս նախ իր մայրաքաղաքի հանգամանքին, առաքելական կրիստոնէական քարոզութիւններու, եւ մանաւանդ իր անդամներուն հարստութեան ու ազնուականութեանը։ Շատ անգամ նիւթական օգնութեան կը հասնէր նա ննդեալ «Եղբայրներուն» ո՛ւր որ ալ զըտնը նըւէին անոնք, իր ազդեցութիւնը ոսկի թեւրով ծաւալեցաւ։ Իր ծագման մէջ զուտ քրիստոնէական գաղափարով կատարուած այդ փոխադարձ օժանդակութիւնը՝ որ անոր բացատիկ դիրք մը ապահովեց, շուտ կորսնցուց իր մարդասիրական նշանակութիւնը՝ տիբապետական ծգտումներ անուցանելու համար Պետրոսի յաջորդներուն մէջ, որոնք՝ քրիստոնէութեամբ զնարակուած՝ կը պահէին սակայն ազգային ոդին։ Եւ ահա Բ. դարու վեցնը (196) Վիկտոր պապը Զատկի վէճին առթիւ իր Աթոռին չնպատակող եւ նին աւանդութիւնը շարունակողները նզովեց իրեւ ներեստիկոս (= Չորեքտասանականը)։ Նմանօրինակ յաւակնութիւններ յանախ դրդեցին Հռովմի փառաւաէր պապերը հակաքրիստոնէական տիբապետութիւններու։ պէտք է խոստովանիլ սակայն որ ուրիշ երկիրներու քրիստոնեաները չքաջալերեցին զանոնք. ո՛չորպահու ուզէր իր ինքնիշխանութիւնը կորսնցնելով՝ հպատակիլ ո՛չ-բարեսէր տրամադրութիւններու։ Իրողութիւնները սակայն իրենց ընթացքովը կը յառաջդիմէին. բոլոր այն պայմանները որոնք մինչեւ Գ. դար Հռովմի մեծութիւնը շինածէին, այնուհետեւ ալ չդադրեցան անոր փառքն ապահովելէ։ Մեծն կոստանդին կայսրութեան կեզրոնը Պոլիս փոխադրելով (330) առիթ տուաւ որ Քրիստոսի ծկնորսը Վատիկանի արքունիքը կազմակերպէ Միջին դարու ընթացքին մէջ։ Ո՛չ մէկ ատեն սակայն Հռովմայ ազդեցութիւնը բացարձակ եղաւ Արեւելքի, եւ նոյն իսկ Արեւմուտքի մէջ։ Իսկ


մասնաւորաբար Հայոցս հետ անոր յարաբերութիւնը Գ. դար կը վերանայ, ըստ զրոյցին։ Լուսաւորիչ՝ որչափ ալ տոգորուած ըլլար քրիստոնէական խոնարհութեամբ, պիտի չյօժարէր դարձեալ իր չարչարանքին սակրվը շահուած հօտը առաջնորդել Պետրոսեան փարախը կամ Կեսարիոյ Աթոռը։ Մանաւանդ, արդէն իր օրերուն սկսած էին մասնաւոր արժէք մը ունենալ այն Աթոռուները որոնք ուղղակի առաքելական յաջորդութեան մը հետ կը կապուէին։ Մեծն Կոստանդիանոսի տուչութեանց (donation) առասպելը յերիւրուցաւ Թ. դարու՝ Նիկողայոս Ա.ի օրով (է58-67), Սուտ-Իզիտորքան «Խարդախութիւններու» հիման վրայ (Hist. de l'Église, Funk, Ա. 417-20), այդ կեղծումօի շարժումներէն ծնունդ առաւ նաեւ Դաշանց Թուղթը իր բոլոր առասպելներով։ Ինչ որ ալ ըլլայ սակայն այդ կեղծուած գաւերաթուղթերու ներքին արժէքն ու գիտումնաւոր յօրինուածը, այսօր ստուգութիւն մըն է որ Հայոց եւ Հռովմայ Եկեղեցիներուն յարաբերութիւնները ո՛չ թէ Գրիգոր Լուսաւորչէն եւ Սեղբետոսս պապէն՝ այլ էապէս Խաչակիներու արշաւանքէն կը սկսի։ Ե. դարու քաղաքական այն տագնապը որ մեր ազգին ճանաւագիրը որոշագրեց, մեր նախնեաց ներշնչեց նաեւ ինքնազիտակցութեան զօրաւոր կամք մը։ Մինակ մնացած ըլլալով ահեղ հոսանքներու առջեւ, անոնք յոյսերնին կտրեցին քրիստոնեայ աշխարհներու օժանդակութենէն, համոզւելով որ ուրիշներու համար սեահական շահն է միայն քրիստոնէութիւնը։ Այդ գիտակցութիւնը զինքը կղզիացուց կերպով մը՝ ներքին զօրացումի նիզով, եւ այն ատեն միայն գործ ունեցաւ քրիստոնեայ համայնքի մը հետ երբ քաղաքան խնդիրներ անհրաժեշտ կը դարձնէին զայն։ Յայտնի է որ եթէ զրացի ըլլային, Հայերը պիտի չուզէին երբեք յարաբերութեան մտնել Յունաց հետ։ Եւ, ինչպէս ըսմինք, Խաչակիներու պատճառով սկսաւ Հայոց շփումը Լատինաց հետ, քանի մը դարեր շարունակ պապերու արքայական երազները զգուելով։ Շուրջ 1141ին, Անտիոքի մէջ Լատինները ժողով մը կը զումարեն (պատճառն անորոշ), ուր կը հրաւիրեն նաեւ Գրիգոր Գ. Պահաւունի կաթողիկոսը եւ իր եղբայրը ներսէս արքեպիսկոպոս (Շնորհնալի),

որոնց համբաւը օտարներու առջեւ ալ սկսած էր հոչակուիլ: Ժողովին մէջ խնդիր կը լցայ նաև այն քանի մը կէտերուն վրայ, որոնք Հայ Եկեղեցին կը բաժնէին Լատինականէն: Կաթողիկոսին եւ իր Շնորհալի եղբօր պատասխանները շատ գոհ կը թողուն լատին հայրացամէրները, որոնք արժանապէս կը պատուասիրնեն զանոնք: Պահլաւունի հայրապետը հոն ներկայ զտնուող պապի ղետպանին հետ նոյն իսկ կը մեկնի դէպի երուսաղէմ, Տնօրինական վայրերն այցելելու՝ ուխտաւորաբար, Ս. Քաղաքին մէջ ալ լատինները ժողով կը գումարնեն Հայոց հայրապետին ներկայութեան. խնդիրներ կը յուզուին դարձեալ Հայ Եկեղեցւոյ մասին, ժողովական եպիսկոպոսներն այնքան գոհ կը մնան որ գովեստներ կը զրեն պապին՝ Պահլաւունի հայրապետին նկատմամբ: Եւգինէս Գ. յատուկ պատգամաւորութեամբ մը գաւազան եւ հայրապետական բող զրկեց Գրիգոր Գ.ի, միանգամայն նաև սիրալիք նամակ մը: Կաթողիկոսը չթերացաւ քաղաքավարական պատշաճից մէջ, եւ թղթակցութիւն մը սկսաւ երկու հոգեւոր պետերուն միջեւ: Բնականաբար կրօնական խնդիրներ կը կազմէին անոր առանցքը, ու կը զգացուէր արդէն Եւգինէսի թաքրուն մոտածումը, որ էր Հայերը միացնել իրենց եւ այդ կերպով Սրբւելքի մէջ պաշտպան մը գտնել Խաչակիր բանակներուն: — Շնորհալիի օրով լատինական յարաբերութիւններն առժամապէս տեղի տուին, վասնզի Յոյներն սկսան իրենց ամբողջ խորամանկութեամբը հնարիլ. ու կարծես աղտոտ մրցում մը յառաջ եկաւ Յոյն եւ Լատին Եկեղեցիներու մէջ՝ Հայկական որսին համար: Գրիգոր Գ. Տղայ թուղթ զրեց Լուկիոս պապին, վասնզի Յոյները տեսնելով հայ թագաւորական տան մերձաւոր յարաբերութիւնը լատին իշխանական տուններու հետ եւ նոյն իսկ խնամութեանց հաստատուիլը, սկսան զրպարտութիւններով աղարտել Հայ Եկեղեցին: Անշուշտ Գրիգոր եպիսկոպոսի եպիսկոպոսի երթը որ Տղայի թուղթը կը տանէր դէպի Հոռովմ, որչափ կ'արդարանար «վասն վտանգին որ ի Հոռովմոց կրէին Հայը» (Ա.արդան), նոյնքան ալ Լեռն Բ.ի քաղաքականութեան արդիւնքն էր:

ՇԱՀԱՐԾ ՎՐԴ. ԱՍՀԱԿԵԱՆ

(Նախատակ)

(Դարունակելի՝ 4)



Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

● Նր. 3 Նոյ. — Ս. Զօրից Աւետարանչացն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի բակի Ս. Յովհ. Աւետարանի Հայամատրան մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Հայկաղուն Վրդ. Արքահամեան:

● Կիր. 4 Նոյ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբի բակ Մայր Տաճարին մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Պարգև Վրդ. Վրթանէսեան: Ս. Պատարագին էր Հոգ. Տ. Յափեկայ Աստվածահօրն. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Գեթսեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ: Հայր Յովհէփի գերեզմանին վրայ, Պատարագին էր Տաճարին Տեսուչը Հոգ. Տ. Պարեգին Արեղայ Գաղաննեան:

● Եր. 10 Նոյ. — Յ. մ. Ժամը 2ին, Գեր. Տեղապահ Ս. Հօր Գլխաւորութեամբ, Արքական եպիսկոպոսներ և Հոգ. Վարդապետ հայրեր հանդիսաւոր չքերթով իշան Ս. Յարութեան Տաճար: Տաճարի մուտքին՝ անոնք զիմսւորուեցան Ս. Յարութեան Հոգ. Ժամարար վարդապետներէն, արքաւագներէն և բովանդակ ուսանողութենէն, որոնք եկեղեցական նսխազգեստ հանդիսաւորութեամբ առաջնորդեցին Գեր. Տեղապահ Արքապահն ու Միարանութիւնը դէպի Ս. Գերեզմանը: Ս. Գերեզմանի ուխտէն յետոյ, Թափօրը անցնելով Լատինաց Ս. Մարիամ Մագթաղենացւոյ Մատուռէն և Տաճարի հրասիսային թէկի Ս. Կուսի Կամարաշարէն, իշան Գիւտ Խաչի այրը, որուն ուխտի արարողութենէն յետոյ յարակից Հայապատկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյն մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատնակը:

Երեկոյեան կատարուեցաւ Տնօրինական Աըլքատեղեաց այցելութեան թափօրը, որմէ յետոյ Գեր. Ս. Տեղապահը, Ս. Եպիսկոպոսունք և Հոգ. Վարդապետներ չքերթով վերադառն Մայրավանքանը:

● Կիր. 11 Նոյ. — Գիւտ Խաչ. առաւտօնեան ժամը 5ին, Նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպոս. Քէմաննեանի վարդապետ հայրեր և ուսանողութիւն պաշտօնական թափօրով իշան Ս. Յարութեան Տաճար, որուն մուտքին զիմսւորութիւնը տեսնարի տեսչէն և կերտնաբարձ զպիրներէն, առաջնորդուեցան Գողզոթայի Խաչելութեան Մատուռը: Գողզոթայի ուխտէն յետոյ, Թափօրը իշան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Տաճարը, ուր պաշտուեցաւ առաւտօնեան հանդիսաւոր ժամերգութիւնը: Ս. Պատարագէն առաջ Գեր. Տեղապահ Արքապահն ընկերակցութեամբ Գեր. Եպիսկոպոսներու և Հոգ. Վարդապետներուն Մայրավանքէն չքերթով իշան Ս. Յարութեան Տաճար, ու մասնակցեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագին որ բազմամայն երգեցողութեամբ մատուցուեցաւ Ս.

լուսաւորչի մէջ : Հոգ. 8. Յակոբ Վլրդ. Վարդանեանեանէ :

Յետ Ա. Պատարագի կազմուեցաւ օրուան մեծանանդէս թափորը : զիսաւորութեամբ Գեր. Տեղապահ Ա. Հօր, և մասնակցութեամբ Ա. Եպիսկոպոսներու, հոգ. Վարդապետներու, սարկաւագ և բոլոնդակ ուսանուութեան, իւրաքանչիւրը ըստ կարգի և աստիճանի ճշխապէս զգեատառութելով : Թափորը վառեալ մամեդէններով :

խաչ ու խաչվառներով իշաւ Գիւտ Խաչի այլը, ուր Գեր. Տեղապահ Հօր աւետարանի ընթերցումէն յետոյ, թափորը բարձրացաւ Տաճարի հիւսիսային թեւէն դէպի : Գիւրեզմանին չուրջ, ուր արդէն կը սպասէր Հայազգի հաւատացեալներու հոծ բազմութիւնը : Բազմամարդ այս թափորը որ անընդհատ կցուցած էր Ա. Գիւրեզմանի ընդարձակ շրջափակը, երեք անգամներ Սրբավայրին շուրջ չըրջան ընելէ յետոյ, անցաւ Պատանաստեղի, ուր Աւետարանի ընթերցումէն յետոյ, անցաւ Պարձեալ Ա. Գիւրեզման ու կանգ առաւ ատեանին մէջ : Հոս կարգացուեցաւ Ա. Աւետարան, երգուեցաւ Ճէր Ռդորի թերթիւն և խաչի քա Քրիստոս : Գեր. Տեղապահ Հօր Քրիստոսի Ա. Խաչափայտի ճաճանչաւոր մասունքով տուած օրհութենէն յետոյ, թափորը անգամ մը ևս բարձրուելով Ա. Գիւրեզմանին չուրջ անցաւ Տաճարի հարաւային թեւը և իշաւ Ա. Լուսաւորի Տաճար, ուր վերջ գտաւ Գիւտ Խաչի պարուաւան մեծվայիւուչ և շատ սրտազբաւարացութիւնը, որ Ա. Յարութեան Տաճարին մեր ամենավայրաւոր արարողութիւններէն մինէ :

Գրեթէ կեսօր էր երր Միաբանութիւն և ժողովարդ շերթուով կը վերադանային Մայրավանք :

● Կիր. 18 նոյ. — Հանդիսաւոր Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ : Պատարագեց Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան, որ նաև քարոզեց ներկայացնելով Պոլսոյ հասկին Պատարագը Երանեաշնորհ Տ. Մաղաքան Ա. Արք. Օրմանների կեանքն ու զորժութեամբ Յանձնական պատուաւոր պաշտամունք Նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ա. Հօր, և ի հանդիսաւ հզուան Օրմաններ Արքազնի, Այս հոգեհանգիստը կը կատարեէր Հանգուցեցաւ Սրբազնի չնորհաւի քրոջ զաւակներուն՝ Ճէր ներսէեան քայլերու խնդրանքով, որոնք Ամերիկայէն ժամանած են Երուսաղէմ, ուսումնասիրելու համար Ա. Աթոռիս կարգ մը զրչազիրները :

● Ուր. 23 նոյ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տոնին նախատօնակը կատարուեցան Ա. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ, հանդիսապետութեամբ Գեր. Տ. Նորայր Ա. Եպս. ին :

● Եր. 24 նոյ. — Ա. Հրեշտակապետացն Գարդիլի եւ Միթայիլի, առաւօտեան ժամերգութիւնն ու Ա. Պատարագը մատուցուեցան ի Ա. Հրեշտակապետ : Պատարագին էր Հոգ. Տ. Յարութիւն Վլրդ. Մանչեան, Յետ Ա. Պատարագի կատարուե-

ցաւ տարեկան հոգեհանգստեան պաշտօնը Ա. Աթոռիս բարերար Ազգաւոնի ձէվահիրնեանի և զաւակաց և եղբարց հոգւույն ի հանգիստ, ինչպէս նաև զարեւալ Ա. Աթոռոյ բարերար Արքոր Մովսէսեանի հոգւույն ի հանգիստ :

● Կիր. 25 նոյ. — Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ : Պատարագեց Հոգ. Տ. Գարեգին Արդ. Դապանի անձնան :

Պ Ա Շ Տ Ա Ն Ա Ա Ն Բ

● Ուր 2 նոյ. — Առաւօտեան ժամը 9 ին, Գեր. Տեղապահ Ա. Հայրը, Ընկերակցութեամբ կայուածական քարտուղար Տիար կարպիս Հինդըլեանի, վանական զործերով Ամման մեկնեցաւ և վերադարձաւ Եր. 3 նոյ.ի կ. զ. ժամը 4 ին :

— Կ. զ. ժամը 3 ին, Գեր. Տ. Առուբէն Ա. Եպս. Քէմհանեան, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Զաքէն Արդ. Զինչինեանի և քարտուղար Տիար կարպիս Յակոբեանի ներկայ գոնուեցաւ, քաղաքիս Լուտերական կազմակերպութեան կողմէ սարքուած պատպարչի բացման հանդէսին :

● Կիր. 4 նոյ. — Կէսօրէ վերջ, Գեր. Տեղապահ Ա. Հայրը, Ընկերակցութեամբ Գեր. Տ. Նորայր Ա. Եպս. Պողարեանի, Հոգ. Տ. Զայկազուն, Այրովըք և բարգէն վարդապետաց, Նոր Երուսաղէմ և Յապակէ մեկնեցաւ զրադելու համար կալւածական խնդիրներով և վերադարձաւ Ել. 8 նոյեմ.ի կ. զ. ժամը 3 ին :

● Գչ. 7 նոյ. — Յոյն Հռովմէտղաւաններու պատրիարք Նորին Ամեն, Մաքսիմո Գ.ի. Երուսաղէմ ժամանման առթիւ, ի զիմաց Ա. Աթոռոյ զիմաւորութեան գնաց Աւազ Թարգման՝ Հոգ. Տ. Զայրիկ Վեր. Ալանեան :

● Եշ. 8 նոյ. — Առաւօտեան ժամը 11 ին, ի զիմաց Գեր. Տեղապահ Ա. Հօր, Գեր. Տ. Առուբէն Ա. Եպս. Քէմհանեան, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Յարութիւն Վեր. Մուշեանի և Տիար կարպիս Հինգիւանի, բարի գալուստի այցելութեան զացին Ն. Ամեն. Մաքսիմո Գ.ի., և հիւրասիրուեցան պատշաճ կերպով :

● Կիր. 11 նոյ. — Ի զիմաց Գեր. Տեղապահ Ա. Հօր, Հոգ. Տ. Գարգէ Վլրդ. Վ. Պողական կայուածական հանդիսաւ հզուան Երեկոյեան հոգւույն Այրով կողմէ մատուցուած Ա. Պատարագին, և յետ Ա. Պատարագի տեսակցեցաւ Նորին Ամենապատութեան հետ :

— Տեղույս Յոյն Օրթոսոքս Պատրիարքութեան հաստատման 1500ամեակի տարեկարձի առիթով, Յաւնաց Պատրիարք Ն. Ամեն. Տիմոֆէուլէտիսի մասնաւոր հրաւերին վրայ, յ. մ. ժամը 3 ին, Գեր. Տեղապահ Ա. Հայրը և Գեր. Տ. Նորայր Ա. Աթոռ. Մանասեան, Ընկերակցութեամբ Աւազ

Թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վեզ. Ասւանեանի, Ներկայ գոնուեցան Գոհաբանական Մազթանքին և Հիւրասիրութեան Համբարձման լերան հիալիլիոյ յոթական վանքին մէջ:

● Եր. 17 նոյ. — Առաւատեան ժամը 11-ին, Գեր. Տեղապահ Ա. Հօր այցելեց Քրանսական ընդհանուր հիւրատոսարանի քարտուղար:

● Ուր. 23 նոյ. — Կրթական նախարար Բռնհի Պէջ Ապուլ Հատիի մասնաւոր հրաւերին վրայ: Բամալա զնաց Գեր. Տ. Առուբէն Ս. Եպիփան. Քէմհաննան, ընկերական թեամբ Հոգ. Տ. Զաւէն Արքղայ Հինչնեանի, և Ներկայ գոնուեցան Սինէմա Տիւնիայի մէջ տրուած սպատօնին, բազմամեայ զատիւարակ Ահմէտ Ասմին Պէջ Խալտիի մահուան քառասունքին:

● Ուր. 30 նոյ. — Յ. մ. Ժամը 2ին, Գալանտիայի օդակայանէն Պալիս մեկնեցաւ Ս. Աթոռիս Միաբաններէն Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գաղանձեան:

ԺԱՌԱՆԳԱԿԱՐԱԾ Վ. Ա. Բ. Ժ. Ա. Բ. Ա. Ը.

Մասնաւոր գոհունակութեամբ կ'արձանագրենք նոյեմբեր-Դեկտեմբերի ընթացքին արտասահմանէն Մայրավանք ժամանեցին 10 պատանիներ որոնք ընդունուեցան Ս. Աթոռիս ժառանգաւորաց վարժարանը: Վարժարանին զարդնթացքները կը շարժուակուին կանոնաւոր և յարատենիով ու աշխատանքով:

Ա. Մ. Մ. Ա. Կ.

Բչ. 19 նոյեմ. — Յորդանանի Վեհ. Թագաւոր Բարձակ. Ա. վերապարձաւ Սառուի Արարիայէն: Թէ ողջերթի և թէ վերապարձի ընդունելութեան հանդիսութիւնները եղան փառաշուք, մասնակցութեամբ բովանդակ Յորդանանի պետական, զիւպատոսական կազմին, հոգեւոր պետերու, զիւանազիւտական ներկայացուցիչներու, զիւզապետներու, և այլն և այլն:

Այս առթիւ Ամմանի մեր Հոգեւոր Հովիւր, Հոգ. Կորիւն Վրզ. Մանուէլեան, մասնաւոր հրաւերովի ի դիմաց Ս. Աթոռիս և Հայ համայնքին մասնակցած է ոոյն հանդիսութեանց:

Դարձեալ Եր. 1 Դեկտեմբերին, Հոգ. Հայրառուրը մասնաւոր հրաւերի մը վրայ ներկայ գոնուեցաւ Յորդանանի Երեսիսանական ժողովութեան բարձր բացման հանդէսին:

Կիր. 2 Դեկտ. — Ամմանի Հոգ. Հովիւր Տ. Կորիւն Վրզ. Մանուէլեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցած է, Արևէյֆայի զիւզական Հայամատրան մէջ, մատուէն ներկա կատարուած շահուարանի համար կը մազթենք յաջողութիւններ:

Բնարան ունենալով «Եկայք շինեցուք Սուրբ դիմուանն լուսոյ» (Եարական):

Այս առթիւ գոհունակութեամբ կ'անդրադառնանք որ Ս. Աթոռիս Հեթումեան Վարժարանի (Ամման) աշակերտութեան թիւը — աւելի քան նախորդ տարիներունը — հասած է 280ի:

Դեր. Տեղապահ Ա. Հօր կողմէ հետեւեալ հետապիրը ըրկուած է Քանթըրպարիի Ս. Արքեպիսկոպոսին, Ն. Վեհ. Ճօրճ Զ. Անդրիոյ Թագաւորին ապաքինման առթիւ:

Քանդրբարիի Գեր. Արքայիսկոպօսին

Լամպէք Պալաս
Լոնտս

Կը խնդրենք Եերդ Գերաքնորութենէն որ Եերկայացնէն մեր յարգախ ընորհաւորիքնենք եւ բեկրանք Կարին Վեհապատրիւն ձօրն Զ. ի բարեամակի ապահինման առթիւ: Գեհարանական մարդանք մատուցինք մեր Մրատեփիներուն մէջ իր բանկազն առողջութեան եւ նօրանու վանզենէ խօպան զերծ մնալուն համար: Կը մազքենք որ Տէր պարզէ Նարին Վեհապատրիւն եւ կարգաւան ու փառաւոր իշխանութեան եւ կար կեանք, եւ բարգաւան ու փառաւոր իշխանութեան:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՎՈՐ ՀԱՅՈՑ

Ս. ԵՐՈՒԱԾԱԾՒՄ

ԵՊԻԾԵ ԱՐՔԵԿՈՍ. ՏԵՐՏԻԵԽԵԱՆ

12 Դեկտ. 1951

Ս. Արք. Երուածական

ՕԲ. ԱԽՐԱԲԻ ՏԵՐ ՆԵՐՍԻՍԵԱՆ

ՄԵՐ ՄԷՋ

Հոկտ. 22-ին Երուածալէմ ժամանեց Ամերիկայի Հարվըրտ Համալսարանի բրօքիսէօս և անուանի արեւելագէտ և բիւզանդապէտ Օր. Սիրաբիի Տէր ներսէսեան իր համեստափայլ քրոջ Տիկին Արաքսիի հետ:

Մեր ժողովուրգի այս թանկազին և շատ պատուարեր զաւակը առաջին իսկ օրէն եղաւ մեր բալորին յարգանքին առարկայ, ու Գեր. Տեղապահ Ա. Հօր բարեհաճ արտօնութեամբ, իրեն տրամադրուեցան Ս. Աթոռիս կարգ մը կարեւը գրչազիրները, որոնց ուսումնասիրութեան համար ան յատկապէս եկած է Երուածալէմ:

Ոգուուելով իր Երուածալէմ ներկայութենէն, Ժառ. Վարժարանի հոգ. Տեղոչի կարգազրութեամբ ան տուած է և պիտի տայ իր մասնազիտութեանց և մասնաւորապէս Հայ զրչազրական արուեստին շուրջ կարգ մը զասախօսութիւններ:

Ի սրտէ կը մազթենք յաջողութիւն շնորհալի Օրիսրդին:

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

ՄԵԼԿՈՆԵԱՆ ԿՐԹ. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ՆԻԿՈՍԻԱ - ԿԵՊՐՈՍ

P. O. Box 407 — Telephone 295

NICOSIA, CYPRUS.

Հ Ր Ա Ւ Է Ր

1951 տարիի վախճանին կը լրանայ Մելքոնեան կրթ. Հաստատութեան առաջին բառորդ դարու գործունէութեան շրջանը :

Ծրագրուած Քսանըննզամեակի տօնակատարութիւնը տեղի պիտի ունենայ հաստատութեան մէջ 1952 Յունուար 13-ին, Կիրակի օր, որ կը զուգադիպի անմահ բարերար աղա Կարապետ Մելքոնեանի անուան տարեդարձի նախօրեակին :

Նոյն օրը ժամը 8.30ին Նպիսկոպոսական քառածագի պատարագ պիտի մատուցուի հաստատութեան մատուցուին մէջ, ժամը 10ին, հոգեհանգստեան արարողութիւն պիտի կատարուի բարերարներու դամրանին վրայ, թէ Մելքոնեան հարազատներուն եւ թէ Հ. Բ. Ը. Միութեան հանդուցեալ բոլոր անդամներու յիշատակին, իսկ ժամը 11ին տեղի պիտի ունենայ յորելինսական հանդէսը :

Սիրով կը հրաւիրուին Հաստատութեան շրջանաւարտները, նախկին սաները, ինչպէս նաև բարեկամները մամնակցելու բոլոր այս հանդիսութեանց: Նրանաւարտները կը հրաւիրուին նոյն օրը սեղանակից ըլլալու աշակերտութեան կէսօրուան ճաշին եւ ժամը 3ին ալ հանդիպում մը ունենալու հոգաբարձութեան եւ ուսուցչական կազմին նետ:

ՏՆՅՈՐԵՆՈՒԹԻՒՆ

Մանօր 1. — Այս հանդիսուրեանց առքիւ ստացուած նեռագիրներն ու նամակները պիտի յայտարարուին հանդէսի ընթացքին եւ պիտի պահուին բանըննզամեակի յոբելինական բղացարքին մէջ:

2. — Հրաւիրեալներէն կը խնդրուի նախօրօֆ հաղորդել մեզի քէ հանի՞ հոգիով ներկայ պիտի կարենան ըլլալ բայ այնմ կարգադրութիւններ լնելու համար:

25 - Ա Մ Ե Ա Յ Յ Ո Բ Ե Լ Ե Ա Ն

ՄԵԼԿՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

1951 տարիի վախճանին կը լրանայ նաև Մելքոնեան կրթական Հաստատութեան առաջին բառորդ դարու գործունէութեան շրջանը :

Քսանըննզամեակի տօնակատարութիւնը Հաստատութեան մէջ տեղի պիտի ունենայ Բարերար Աղա Կարապետի անուան տարեդարձի նախօրեակին, 1952 Յունուար 13ին, Կիրակի օրը :

Նոյն օրը ժամը ութ ու կէսին, Հաստատութեան մատուցուին մէջ պիտի կատարուի նպիսկոպոսական քառածագի պատարագ, ապա հոգեհանգստի պաշտօն Բարերարներու դամբանին վրայ՝ թէ Մելքոնեան հարազատներու եւ թէ Հ. Բ. Ը. Միութեան հանդուցեալ բոլոր անդամներու յիշատակին: Իսկ ժամը 11ին պիտի կատարուի Ցորել. Հանդէսը:

Օրուան խորհուրդին հալորդակից պահելու համար մասնաւորապէս հեռաւոր վայրերու մէջ գտնուող մեր սաներն ու սանութիները, տնօրէնութեան խօսքն ու մատուցուելիք պատարագէն որոշ մասեր պիտի ծայնասփուուին, 13 Յունուար, առտուան ժամը 9.5 մինչեւ 10ը: Նոյնպէս 1952 Փետրուար 4ին, երկուշաբթի օրը, կէսօրէ ետքը ժամը 5.15-ին մինչեւ 6, առանձին յայտագրով մը, ռատուիսի հայկական ժամը նուիրուած պիտի ըլլայ Մելքոնեանի յորելինսական հանդիսութեանց:

Զայնասփուումները պիտի կատարուին Կիպրոսի ռատիոկայանէն. միջակ ալիք 495 մեթրի վրայ:

Դիլոսիա, 11 Գեն. 1951

ՏՆՅՈՐԵՆՈՒԹԻՒՆ

Վ. Ա. Ս Ե Բ Ո Ր Գ Ա Խ Ա Ճ Մ Ա Ն «ՍԻՌՆ»Ի

Ամերիկայէն Օր. Մարի Շալամեան «Սիրն»-ի բարզաւանման համար նինը (5) Ամերիկեան Տոլոր կը նույրէ Հեռամբ Հոգ. Տ. Սերովքէ Վրդ. Մանուկեանի:

Կը յայտնենի մեր ընորհակալութիւնները յարգելի նույրատուին:

Վարչուրիւն «Սիրն» Ամապրի

«ՍԻՌՆ»Ի ԽՄԲԱԳՐԱՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒՓԵԿԵՍՆ ՄԱՏԵՆԱԳՈՐԾԱՆԸ ԵՆՈՐՀԱԿՈԼՈՒԹԵՍՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԶԱՒԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆ 1948-1951: (Շարունակութիւն վերի պրակին): էջ 73-90:

ՀՅՈՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ: Մ: Սերոբեան: Գաճիրէ, 1950, էջ 90:

Նուէր Ներսէս Թամամեանէ:

ՀՅՈՒՒԻ ՀՅՈՅՆԵՐ: Վահան Մալէզեան (նուէր): Փարիզ, տպ. «Արաբս», 1947, էջ 289:

ԱՊՐԻԼԵԱՆ ԹՈՒՂԹ, ուղղուած բովանդակ մարդկութեան: Հայկական մեծ եղեռնի 35րդ տարելիցին առթիւ: Օննիկ Կարապետ Թաղէսսեան (նուէր): Փարիզ, տպ. «Արաբս», 1949: էջ 23:

ՏԵՂԻՄԵԼԵԿՆԸԾՈ, տրամ 3 արար: Մարի Աթմանեան-Լը Շըվալիէ (նուէր): Ազատ երկերու Մատենաշար թիւ 2: Փարիզ, Աթմանեան հրարկթ., 1939, էջ 68: (2 Օրինակ): ԳՐԴԳՈԹՈՅԹԻ ՇՈՒՇԱՆՆԵՐ, քերթուածներ (1940-1947): Մարի Աթմանեան (նուէր): Փարիզ, տպ. «Պ. Էլէկեան», 1948, էջ 196: (2 Օրինակ):

ԱՍԵՂԱՅՅՈՂ, քերթուածներ (1947-1951): Մարի Աթմանեան (նուէր): Փարիզ, տպ. «Պ. Էլէկեան», 1951, էջ 116: (2 Օրինակ):

ՀՅՈՅԻ ԵՒ ԼԱՅՈՒ ՀԱՄՈՒՐ: Մ. Իշխան (նուէր): Պէյրութ, տպ. «Համազային Ընկ.», 1951, էջ 250:

ՀՅՆԴՈՒՉՈՎԿ ԲՈՈՒՐՅՈՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆԳԼԻՐԵՆ, աշխատասիրեց Մեսրոպ Կ. Գույամենեան (նուէր): Գաճիրէ, տպ. «Մահակ-Մասունք», 1950, էջ 1151:

ԵԿԵՄՈՒԿՈՆ ՅՈՒՇԱՐՉՈՆ ԵՒ ԿԶՄԻԱԾՆԱԿՈՆ ՅՈՒՇԵՐ: Գրեց՝ Կարապետ Աւագ Քէյ. Գալֆայեան (նուէր): Հովի եղեմի: Ֆրէզնօ, Գալիֆորնիա, 1950, էջ 308:

REPERTOIRE DES BIBLIOTHEQUES DU PROCHE ET DU MOYEN ORIENT.
Préparé par Joseph A. Dagher. UNESCO, Paris, 1951'. Imprimerie St. Paul, Harissa. 182 pages. Envoyé par l'Imprimerie St. Paul Harissa.

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ Մ. ՊԱՍԱՐԱԳԻ, Մ Ակար Եկմալեանի: Հայերէն բնագրաւ եւ Անգլերէն տառադարձութեամբ: Նիւ Եորք, տպ. «Տէլֆիր», 1950, էջ 139: Նուէր Տիրան Եպօս. Եերացյեանէ:

ԵՐԲԵԿՈՂՈՒԹԻՒՆՔ ԱՆԱՐԴՈՔ է, (վէպ հայ ժողովրդական կեանքէ): Գրեց՝ Գարբիէլ Թագւորեան (նուէր): Աղեքսանդրիա, տպգրին. Ա. Սաեփանեան, 1950, էջ 284:

ՃՐՈՒԳ — Գիրը. Բ. — Ա. Ա. Պէտիկեան: Հրատարակութիւն Մ. Մ. Զամալեան Հրատարակչական Հիմնադրամի Հայ Աւետ. Եթեպեցւրյ, Նիւ Եորք: Նուէր հեղինակէն, (2 օրինակ): Նիւ Եորք, «Ներսօ» Տպ., 1948, էջ 186: Նուէր Պետիկեան Հրատ. Ֆօնտէն 1 օրինակ:

ՀՅՈՅԵՆԻ ԾԽԱՆ, Վահէ Հայէ (նուիրատու): Կը բաղկանայ երեք հատորներէ. — Ա. Շարք. — Արձակներ, Հէրիաթներ, Պատմուածքներ: Ֆրէզնօ, Գալիֆ., էջ 126: Բ. Հատոր. — Պատմուածքներ եւ Պատկերներ: Ֆրէզնօ, Տպ. «Նոր Օր», 1941, էջ 175: Գ. Հատոր. — Պատկերներ եւ պատմուածքներ: Պոսթոն, տպ. «Պայքար», 1946, էջ 254:

ԿՈՐԹՔ, (Վէպ): Օննիկ Թոփուզեան (նուիրատու): Պէյրութ, տպ. «Օնիպար», 1948, էջ 240:

(Շարունակելի)

ՀՕՅՍ ՏԵՍԱՐ Ա. ԱՐ-ՊՈՒՅՑՍ ՏՊԵՐԵՆԵՐ

ՕՐԱՑՈՅՑ

1952

ՆԱՀԱՆՁ ԹՈՒԻՆ ՓՐԻՎՏՈՒՄ

(ՀԱՅ ՀԱՆ ՏՈՄԱՐԻ)

Ա.

ԲՈՒՆ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ

8ՆեԴ - 8ՆեՇ = 4444 - 4445

Ա.

ՏՈՄԱՐԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ

0ՆԱ - 0ՆԲ = 1401 - 1402



ԵՐՈՒԽԱՂԵՄ

ՏՊԱՐԱՆ ՄՐԱՋ ՑԱԿՈՐԵԱՆՑ

ԼՀ 222 → → → Գիճ 100 Ֆիլս

(Պատկերազարդ և Ցաւելուածով)

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ Է

Բանասէր - Հայկաբան - Պատմաբան՝ հանգուցեալ

ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲԻԿԵԱՆԻ

ԲԱՌԳԻՐՔ ՍԵԲԱՍՏԱՆՅ ԳԱԻԱՌԱԼԵԶՈՒԻ

Երկասիրութիւնը, պսակեալ իզմիրեանց Գրական Մշցանական

Ա. — Զայնաբանութիւն և Զայնախօսութիւն Սեբաստանայ բարբառ.
 Բ. — Բառզիրք Սեբաստանայ Գաւառալեզուի. Գ. — Ժողովրդական առանձնելուկներ, վիճակ, բաղդասելումներ, ըուտասելումներ, բառախառադրումներ, մանիներ, տաղեր, պարերզներ, օրեերզներ, անէֆրուներ, առներ, նէֆիաբներ, տեղական անուններ, ցանկ՝ յատուկ անուններու և բաստանայ մականուններու եւայլն, եւայլն: